



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Информационный
Принт Ученых Членов
1904

891.99
S 66



891-99
5-66 Կ.

13 APR 2011

ՈՐՈՄՆ ՑԱՆՈՂՆԵՐ

Կոմէղիա 3 գործողութեամբ

հեղ. Վ. Տիրսացեանի



Ներկայացման իրաւունքը վերապահում է հեղինակին

ՀՀ
ՏԸ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանցի
1904

23 JUL 2013

58.827

1903 89A E.F.

Доз. Цензурою. 17 Декабря 1903 г. Тифлисъ.

2 0 6

ԽՄ ՀՕՐ

ՅԱԿՈԲ ՑԻՐԱՅՅԵԱՆԻՆ

Հայր, ի յոհշքո ջերմ եռ տասնա սիրոյն
Որով սիրեցիր դու իմ մասկոյթին.

ՔՍ ՈՐԴԻՆ

ԳՐՈՒԹՈՂ ԱՆՁԻՆՔ

Պ. ԳԵՂՐԴ ԵՐԱՆԵԱՆ 55 ա. գիւղի կալւածատէլ
Տ. ՍՈՖԻԱ ԵՐԱՆԵԱՆ 48 ա. սորա կինը
ՕՐ. ՆՈՒՆԷ 16 ա. սրանց աղջիկը
ՍՈՒՐԵՆ 27 ա. սրանց որդին
Տ. ՍՍԹԵՆԻԿ ՍՈՒՐԵԲԵԳԵԱՆ 58 ա. հարուստ այրի
ԱՐՏԷՄ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՇ 35 ա. սրա որդին
շատ չիկ հապնուած
ԳՈՒՐԳԵՆ ՄԱԼԱՅԵԱՆ 28 ա. Արտէմի ընկերը
հարուստ
ՄԱՐԻԱ ԳԱՌԵՆԻԿԵԱՆ 30 ա. այրի կին
ԼԵԽՈՆ ԳԱՐԱՅԵԱՆ 25 ա. միջին գասակարգից,
մօնօկով
ՄԻԽԱՅԻԼ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎԻՇ ԱՆՏՈՆԵԱՆ 40 ա.
զինուորական սպայ
ԳԵՐԱՍԻՄ ԻԼԻՆԵԱՆ 50 ա. վաճառական
ՍՏԵՓԱՆԵԱՆ 45 ա. ծառայ երանեանների տանը
ՑՈՎՍԵՓ ծառայ Սուլբէգեանի մօտ, ֆրակով,
երիտասարդ
ԲԱՐՄԵԴ (ՎԱՍԻԼԻՑ) ծառայ Գառնիկեանի մօտ:

I գործողութիւնը կատարում է երանեանի
տանը, II-ը Սուլբէգեանի III-ը տ. Գառ-
նիկեանի տանը: I-ի և II-ի մեջ անցել է մի
տարի:

(աջ և ձախ հասարակութիւնից)

Գործ Գ (Երանեանի ժամանակ) մասնաւութիւնը 8
մի ու շատական մ առաջա պահանջանք բանը
առ պահանջանք չէ այս անուանութիւնը առ պահանջանք
առ պահանջանք ունի բարձրացնար ու բարձրացնար
առ պահանջանք ունի Գործողութիւն Ա.

(Ճքեղ դահլիճ երանեանների տանը. մեջտեղը
կամարակապ բացուած, երկու սիների մօտ
տումբէր որոնց վրայ դրուած են ջանիր,
մեջտեղը շրեղ ջան. ձախ ԻԻ պլանում դուռ,
որ տանում է պ. եւ տ. երանեանների սե-
նեակը: Զախ նախարեմ պատուհան. աջ ԻԻ
պլան դուռ, որ տանում է դիպի տան ներ-
քին մասերը: Աջ Ի պլան մուտքի դուռը: Կա-
մարից այն կողմ ընդարձակ դանիճ, որտեղ
կիսով չափ երեւում է դաշնամուր եւ վերան
ջուրակ իր արկեղով: Դանիճնում նախաբեմում
երկու մեծ ծաղկամաններ. ձախ պատուհանի
մօտ դիւան, սեղան եւ արոտներ. կահան-
րումը անձաշակ քեւ նարուստ: Ետեւի դահ-
լիճնում ձախ երեւում է կիսով չափ սեղան
քեյի պարագաներով, առանց ինքնաեռի: Մ'հո-
տեղից կախուած ջանը վառուած է, երեկոյ է):

ՏԵՍԻՆ 1

Տ. երանեան եւ Ստեփան յետոյ պ. երանեան
Տ. երանեան (Անհանգիստ ման և գալիս)
ՍՏԵՓԱՆ (կամարի մօտ ջանիր և վա-
ռում)

Տ. ԵՐԱՆԵԱՆ (հանդարտ ճայնով) ԽԵՂԳ
գլուխդ հաւաքիր Ստեփան և աշխատիր որ մի
ձախող բան չանես, ապա թէ ոչ ծիծաղի ա-
ռարկայ կը դառնանք: Ահա նախազգուշացնում
եմ. ամեն մի հրաման ընդունելիս խոր գլուխ
տուր, չծիծաղես, դէմքդ չծոմոես, լուրջ լի-
նես, շատ շարժումներ չանես, աւելորդ խօս-
քեր չասես, մի խօսքով վարուիր այնպէս, ինչ-
պէս վայել է մի մեծ տան ծառայի:

ՍՏԵՓԱՆ Լուսմ եմ տիկին:

Տ. ԵՐԱՆ. Քաղաքավարի վարուես.

ՍՏԵՓԱՆ Ճատ բարի տիկին.

Տ. ԵՐԱՆ. Քեզ ուղղուած հարցումներին
կարձ ու կտրուկ պատասխան տուր.

ՍՏԵՓԱՆ Լուսմ եմ տիկին.

Տ. ԵՐԱՆԵԱՆ (Վրայ տալով) Այն էլ լուրջ
տոնով:

ՍՏԵՓԱՆ Ճատ բարի տիկին:

Տ. ԵՐԱՆ. Զահերը վառիր:

ՍՏԵՓԱՆ. (Մկուսմ է շարունակել վա-
ռելը)

Տ. ԵՐԱՆ. (Մի քանի բոպէ ման գայուց
յետոյ) Կոիր:

ՍՏԵՓԱՆ (Մէջքը դարձրած՝ շարունակե-
լով վառելը) Լուսմ եմ տիկին:

Տ. ԵՐԱՆ. (Դրգուսած) Լուսմ եմ տիկին.
Երկի իմ խօսքերը իզմուր էլին:

ՍՏԵՓԱՆ(2ըմբռնելով) Ի՞նչ խօսքեր տիկին:

Տ. ԵՐԱՆԵԱՆ Չասացի որ ամեն մի խօսք
լսելիս խոր գլուխ տաս:

ՍՏԵՓԱՆ (Խոր գլուխ է տալիս)

Տ. ԵՐԱՆ. Վառիր ջահերը:

ՍՏԵՓԱՆ (Դլուխ է տալիս եւ զարունա-
կում է վառել)

Տ. ԵՐԱՆ. Հարկաւոր է Սուրբնին համո-
զել, ապա թէ ոչ մի անհամ խաղ կը սարբի...
Դէորդին նախազգուշացնել, նունէին նախա-
պատրաստել... (քիչ բարձր) ԱՌԻ ՑԷՐ-Աս-
տուած, ինչ մեծ պատասխանատութիւն է
հասած աղջկայ մայր լինելը:

ՍՏԵՓԱՆ (Վերջացնելով) Ես վերջացրի
տիկին:

Տ. ԵՐԱՆ. Կարող ես գնալ:

ՍՏԵՓԱՆ (Դլուխ է տալիս եւ գնում)

Տ. ԵՐԱՆԵԱՆ Սպասիր.

ՍՏԵՓԱՆ (Կանգ է առնում զարմացած,
յետոյ արագ գլուխ է տալիս):

Տ. ԵՐԱՆ. Պարոնին կանչիր.

ՍՏԵՓԱՆ (Դնում է եւ յետոյ դառնում)
Ո՞ր պարոնին:

Տ. ԵՐԱՆ. Քանի պարոն կայ այս տանը:

ՍՏԵՓԱՆ Կայ մեծ պարոն և կայ փոքր
պարոն:

Տ. ԵՐԱՆ. Փոքր պարոն, նա մըտեղի պա-
րոնն է. նա դեռ երեխայ է...

ՍՏԵՓԱՆ Հասկացայ. (գնալով երրարդ
պլան ձախ ասում է կողմ) 27 տարէկան ե-
րեխայ, այ նորութիւն, (գնում է)

Տ. ԵՐԱՆ. Ես անպայման կաթուածա-
հար կը լինեմ, անպայման... այս ՑԷՐ Աստուած,

Տէր Աստուած... (նստում է):

ՍՏԵՓԱՆ (Դուրս և գալիս անցնում և աջ
III դրենով գնում):

Պ. ԵՐԱՆ. (Դուրս և գալիս գրաքը եւ
ուրախ դեմքով) Ինձ խնդրել էիր հոգեակս...

Տ. ԵՐԱՆ. (Հոր) Քեզ կանչեցի և ոչ թէ
խնդրեցի:

Պ. ԵՐԱՆ. Ինչո՞ւ ես բարկանում հոգեակս.
չէ՞ որ դու ես սաել, որ արիստոկրատ շրջան-
ներում կանչել երբէք չեն ասում. այլ խնդրել.

Տ. ԵՐԱՆ. Բայց դու նրանց շատ վատ ըն-
դօրինակութիւնն ես, և բառերը միշտ անտեղի
ես գործածում...

Պ. ԵՐԱՆ. Ի՞նչ էիր ասում հոգեակս ..

Տ. ԵՐԱՆ. (գրգուած) Ես սաստիկ գըր-
գուած եմ, դուք ձեր վարմունքով կը խելա-
գարեցնէք ինձ...

Պ. ԵՐԱՆ. Մենք, այսինքն ես...

Տ. ԵՐԱՆ. Ցնորուել ես այսօր ինչ է...

Պ. ԵՐԱՆ. Ինչո՞ւ պէտք է ցնորուեմ, իսկի
էլ չեմ ցնորուել, միայն աշխատում եմ այսու-
հետեւ արիստոկրատների պէս խօսել և հա-
կանալ:

Տ. ԵՐԱՆ. Դրա ժամանակը չէ, այստեղ
աւելի լուրջ խնդիրներ կան:

Պ. ԵՐԱՆ. Ես ոչնչից տեղեկութիւն չու-
նեմ, ինչ է պատահել:

Տ. ԵՐԱՆ. Դու միշտ ոչնչից տեղեկութիւն
չես ունենայ... (յուսահատ) Տէր Աստուած և

ասել որ սա մի ընտանիքի գլուխ է, հասած
զաւակների հայր...

Պ. ԵՐԱՆ. Ես... այսինքն.. գուցէ ունիմ
տեղեկութիւն... այս այն... խնդիրը այն... ինչ-
պէս է...

Տ. ԵՐԱՆ. Խնդիրն այն է, որ ես յուսա-
հատ գըրութեան մէջ եմ, հասկանո՞ւմ ես... Սու-
րբէնը կատաղած է և սպանում է խայտառակել
մեզ...

Պ. ԵՐԱՆ. (Երկիրնով) Ի՞նչ ես ասում... .

Տ. ԵՐԱՆ. Եւ այժմ քեզ կանչեցի որպէս
զի միասին կարողանանք համոզել նրան... .

Պ. ԵՐԱՆ. Այն, այն, միասին համոզենք
նրան... .

Տ. ԵՐԱՆ. Քո որդին ըմբոստ է...

Պ. ԵՐԱՆ. Հոգեանկս...

Պ. ԵՐԱՆ. Անասելի կերպով յանդուգն.. .
ասա խնդրեմ ինչ մեր բանն է Սուլբէզեաննե-
րի նման մարդկանց քննադատելը...

Պ. ԵՐԱՆ. Այն այն, ինչ մեր բանն է
նրանց քննադատելը:

Տ. ԵՐԱՆ. (Չղալին) Թութակի պէս մի
կրկնիր խօսքերս: (Գնալով դեպի աջ դուռը,
բղանում է) Ստեփան...

ՏԵՍԻՒԼ 2

Նոյնք, Ստեփան յետոյ Սուրեն

ՍՏԵՓԱՆ (Երեւալով) Ի՞նչ է տիրուհի:

Տ. ԵՐԱՆ. Ի՞նչ է տիրուհի, անշնորհը, եր-

բէք չպիտի կարողանաս քաղաքացի ծառաներին նմանւել, միթէ այդպէս են խօսում.,

ՍՏԵՓԱՆ Հավաս ի՞նչպէս են խօսում...

Տ. ԵՐԱՆ. Տեսէք ինդրեմ... ի՞նչպէս են խօսում... խօսիր, ինչպէս հարկն է, ինչպէս վայել է մի կիրթ ծառայի...
ՍՏԵՓԱՆ (նեղացած) Ես էլ չեմ փոխուիլ տիկին, ես ծերացել եմ...

Տ. ԵՐԱՆ. Եետոյ... ուըեմն ծերերը քաղաքավարութիմից զուրկ պէտք է լինին, ինչ է...
ՍՏԵՓԱՆ Ես քաղաքավարի եմ տիկին:

Տ. ԵՐԱՆ. Բաւական է, շատ ես թոյլ տալիս քեզ...

Պ. ԵՐԱՆ. Այս շատ ես թոյլ տալիս քեզ հոգեակս...

Տ. ԵՐԱՆ. (Գեորգին) Դու լոիր (Ստեփանին) իսկ դու ինդրեմ հիւրերի մօտ էլ չսկսես խելքիդ զու տալ ու դատողութիմներ անել. Սուրէնին այստեղ կանչիր...

ՍՏԵՓԱՆ (Անցնում և մեջտեղ գլուխը բափանարելով, կողմ) Երեկ դեռ մեղքեր ունիմ քաւելիք. (գնում է)

Տ. ԵՐԱՆ. Քաւթառ անպիտանը... շարունակ մրժմրթում է, այդ ահտանելի է վերջապէս. մի գեղեցիկ օր ես նրան երեկ դուրս կը շպրտեմ.

Պ. ԵՐԱՆ. Ճատ ես գրգռում հոգեակս, այդ լաւ չէ...

Տ. ԵՐԱՆ. Հանգիստ թող ի՞նձ, առանց այն էլ գլուխս կորցրել եմ և եթէ նկատողութիւն-

ներ ես անելու, այն էլ անտեղի, լաւ կանեմ որ հեռանաս.

Պ. ԵՐԱՆ. Լաւ ես ձայն չեմ հանի. (փոքք պառկա յանկարձ) բայց եթէ չխօսեմ, ի՞նչպէս կարող եմ համոզել նրան...

Տ. ԵՐԱՆ. Տէր իմ Աստուած... Տէր իմ Աստուած...

Պ. ԵՐԱՆ. Մի բարկանար հոգեակս, մի բարկանար, ես ձայն չեմ հանի... (նստում է.)

ՍՈՒԻՐԵՆ (մաքուր սիսրտիւկով պարզ սեւ փողկապով, մտնում է խորքից սառն եւ լուրջ:

Տ. ԵՐԱՆ. (նայելով նրա կողմը) Վատ հովեր են փշում:

ՍՈՒԻՐԵՆ Դու ինձ կանչել էիր:

Տ. ԵՐԱՆ. (քիչ մեղմ) Այս զաւակս. դու արդէն լսեցիր այն ուրախալի լուրը, որ ոչ միայն քո քրոջ այլ և մեր ամբողջ ընտանիքի համար մի նոր ասպարէզ է պատրաստում. ես ցանկանում եմ իմանալ թէ ի՞նչ է քո կարծիքը այդ մասին:

ՍՈՒԻՐԵՆ Դուք չհարցըք իմ կարծիքը երբ այդ հարկաւոր էր, իսկ այժմ կարծեմ արդէն աւելորդ է:

Տ. ԵՐԱՆ. Ես քեզ չեմ հասկանում:

Պ. ԵՐԱՆ. Ձշմարիս է. ինչ որ անհասկանալի բան կայ այդտեղ:

ՍՈՒԻՐԵՆ Եւ կարիք էլ չկայ հասկանալու: Վերջացըքիք:

Տ. ԵՐԱՆ. Նստիր զաւակս. (Սուրենին նըստում է ուսերը բարձրացնելով) Գիտես ի՞նչ

կայ զաւակս, մենք զաւառացի ենք, աննշան, չնշին, հասարակութեան մէջ ոչ մի անուն չունեցող գաւառացիներ. ճիշտ է որ նիւթապէս հարուստ ենք, բայց դրամի հետ հարկաւոր է ունենալ և դիբք. ահա մի դէպը որ նպաստում է մեղ բարձր շրջանների հետ յարարերութեան մէջ մտնել. որ հասկանո՞ւմ ես. ինտելլիգէնտների այդ շրջանները, ուր տիրում են քաղաքավարութիւն, կրթութիւն, արտասահմանեան բոլոր վայելչութիւնները, սուր հասկացողութիւն և վերջապէս այն ամեն առաւելութիւնները, որոնցից զուրկ ենք մենք:

ՍՈՒՐԵՆ ես դեռ շիմացայ, թէ ինչ բանի է հանգելու քո այդ գովեստները:

Տ. ԵՐԱՆ (ջարունակում է) Ովքեր էին մեղ մինչև այժմ իրրե վեսացու ներկայանում, ոչնչութիւններ, օժիտ որսացող սինլորներ, որոնց շրջանը շատ ցած է կանգնած քան ինչ որէ Սուրէգեաններինը. իսկ այժմ ես հասել եմ իմ նպատակին. ես գտել եմ մի այնպիսի վեսացու, որպիսին կը ցանկանային ունենալ քաղաքացի մայրերի մեծ մասը:

ՍՈՒՐԵՆ նախանձելի դրութիւն է խօսք չկայ:

Տ. ԵՐԱՆ. Կրթուած, զարգացած, համեստ, առարկինի...

ՍՈՒՐԵՆ իսկապէս

Տ. ԵՐԱՆ. Ի հարկէ:

ՍՈՒՐԵՆ Որ նա զարգացած է, այդ անգիճելի է, բայց ինչ վերաբերում է առաջինու-

թեան, նա ամննավիչացած մարդկանցից պահաս առաքինի է, մայր, ես կը կամենայի նախնըա հետ խօսել ապա քեզ հետ, բայց քանի որ գու չափից գուրս գովեստներ ես շռայլում նըան, քանի որ գու չես տեսնում կամ չես կամենում տեսնել նրա այն պակասութիւնները, որոնք կարող են քայլայել իմ քրոջ կհանքը, ես կը խօսեմ: Մայր, նա ամբողջ քաղաքի խօսակցութեան առարկայ է իր անառակ սիրունու հետ միասին:

Պ. ԵՐԱՆ. Անառակ սիրուհի, ես այդ երբէք տանել չեմ կարող:

Տ. ԵՐԱՆ. Մենք զաւակս, նախապատմական գարերում չենք ապրում և ամօթ է նոյն իսկ այդպիսի յետադիմական մտքեր ունենալ. որու գիտես թէ ինչ ես պահանջում, ծիծադելի է նոյն իսկ մտածելը. երեսուն և հինգ տարէկան մի երիտասարդ չի կարող անարատ կեանք անցկացրած լինել, հարկաւոր է աշխարհս լայն հայեացընկ քննել: Ո՞վ է այժմ պարկեշտ մինչեւ ամուսնութիւնը. մինը ծածուկ է գւարճանում միւսը բացարձակ, դրանք կոչւում էն ամուրիական չնշին գւարճութիւններ...

ՍՈՒՐԵՆ (Վեր կենալով) Մայր, որ կուրացել ես, ինչպէս չես տեսնում այն անդունդը ուր կամենում ես գլորել քո աղջկան, իմ քրոջը, իմ անգին նունէիս, իմ անմեղ, յստակ, մաքուր նունէին, մայր ես այդ երբէք չեմ թոյլ տայ... ես...

Տ. ԵՐԱՆ. (ընդհատելով) բայց ինչից ես

ենթադրում որ նա կը դժբախտանայ: Սուլբէ-
գեանը տհաս պատանի չէ, նա հաւանել է
քրոջդ և խնդրել ձեռքը. անշուշտ նա ի նկա-
տի ունեցած կըլինի որ իր վալքը ամենքին
յայտնի է և այդ քայլն անելիս, նա անշուշտ
վճռել է փոխել իր կեանքը և...

ՍՈՒՐԵՆ Անառակ մարդիկ դժուար են
են ուղղում:

Տ. ԵՐԱՆ նա սիրելով նունէին կը մոռա-
նայ իր անցեալի յիմարութիւնները:

Պ. ԵՐԱՆ. Այդ շատ հաւանական է Սու-
րէս...

Տ. ԵՐԱՆ. Ես խօսք եմ տուել տ. Սուլբէ-
գեանին և այդ պատճառաբանութիւնները շեն
կարող դրժել տալ իմ խօսքը, լսում ես:

ՍՈՒՐԵՆ Մայր խնդրում եմ, առանց խոր
մտածելու մի անիր այդ քայլը... մտածիր որ
դա կարող է քրոջս ամբողջ կեանքը թունաւո-
րել, թշուառացնել նրան: Եթէ պ. Սուլբէգեա-
նը այդքան ինտելլիգէնտ է, ուրեմն ես նախ
կը խօսեմ նրա հետ, ես կաշխատեմ գտնել
նրա խօսքերի մէջ կեղծը և ճշմարիտը, և ա-
հա ասում եմ մինչև այդ շլինի, ես չեմ թոյլ
տայ քո կողմից մի որեւէ քայլ անել. ես կը
խանգարեմ:

Տ. ԵՐԱՆ. Ի՞նչպէս:

Պ. ԵՐԱՆ. Բայց դա խայտառակութիւն է:

ՍՈՒՐԵՆ իմ քոյլը շատ թանդ արժէ ինձ
համար. ես նրան աշխարհիս երեսին սիրում
եմ ամեն բանից աւելի. ես չզիտեմ թէ ի՞նչն

է դրդում ձեզ երկուսիդ այդ քայլն անելու,
բայց զիտեմ հաստատապէս այն՝ որ դա չի
իրագործուի, մինչև որ ես ազնիւ խօսք չառ-
նեմ այդ Սուլբէգեաններից մինչև հաստատ
կերպով վստահացած շլինեմ որ իմ քոյլը չի
դժբախտանայ նրա ձեռքին:

Տ. ԵՐԱՆ. Ահա այդ բանն է որ չեմ կա-
մենում, դու և հայրդ ձեր անտաշութեամբ կը
քայլքէք իմ ծրագրները:

ՍՈՒՐԵՆ Ի՞նչ մայլ.

Տ. ԵՐԱՆ. Ինձ լաւ ծանօթ է քո բնաւո-
րութեան բիրտ կողմերը: (Քիչ խիստ) Ես
զգուշացնում եմ քեզ Սուրէն, որ այժմ տեղը
չէ քո արհամարհանքը արտայայտելու և քա-
ղաքավրութեան պահանջների հակառակ վա-
րուելու: Զանա քաղցր խօսել և համակրանք
գրաւել:

ՍՈՒՐԵՆ Ահա թէ ի՞նչ, դուք պահանջում
էք որ ես կեղծաւորի դիմակ հագնեմ և խո-
նարհուեմ այդ բարձր արխստոկբատիայի ա-
ռաջ. իննըբեմ մայլ, ես իմ համոզմունքը և
վերաբերմունքը ինձ եմ վերապահում, իսկ քո
ձկտումները ինձ շեն կարող հրճուանք պատ-
ճառել. դու կամենում ես նետել քո աղջկան
դրանց մէջ, միմիայն նրա համար, որպէս զի
շփումս քաղաքացիների հետ, կարծես զաւա-
ռացի լինելը մի աններելի արատ և կեղտ է,
որը կամենում ես ոչնչացնել...

Տ. ԵՐԱՆ. Հասկանալի է որ այդ այդպէս է:

Պ. ԵՐԱՆ. Մենք պարտաւոր ենք նմանել

նրանց և ընդօրինակել նրանց նուրբը ձեւրը, այդ այդպէս է զաւակու...

ՍՈՒՐԵՆ Բայց ես գաւառացի եմ, գաւառացի՝ կրպիտ և անքաղաքավարի ձեւրով, ինչպէս որ այդ քեզ է թուռմ... սակայն եթէ հարկ լինի, ես գաւառացի կը լինեմ նա և գործքով, իսկ այժմ խնդրեմ ինձ քարոզներ չկարդաք և շստիպէք ինձ դուրս գալ կաշուիցս...

Տ. ԵՐԱՆ. Խելքի եկ Սուրէն, նրանք ուր որ են կը գան միթէ կարելի է այդ տրամադրութեան տակ հիւր ընդունել...

Պ. ԵՐԱՆ. Աստուած գիտէ թէ իիշեր ես խօսում... գաւառացի գործքով... գա հօ անկըթութիւն է.

Տ. ԵՐԱՆ. Զգաստացիր զաւակս, շէ որ քո քըոջ երջանկութեան համար եմ աշխատում.

ՍՈՒՐԵՆ Ա՛խ, թողէք խնդրեմ... դուք կարող էք ինքներդ լընդունել այդ պատուելի հիւրերին, իսկ գալով ինձ... խնդրեմ ինձ չանհանգտացնէք: (Արագ գեում ե):

ՏԵՍԻԼ Յ

Տ. ԵՐԱՆԵԱՆ, պ. ԵՐԱՆԵԱՆ

Տ. ԵՐԱՆ. Ինչպիսի յանդզնութիւն, ինչպիսի շլուած յանդզնութիւն. և դմէ ես մեղաւորը որ նա այդ աստիճան յանդուզն է:

ԵՐԱՆ. Ես... ես ինչով եմ մեղաւոր...

Տ. ԵՐԱՆ. (գրգռուած) Դու դեռ համարձակում ես ասել որ մեղաւոր չեմ:

Պ. ԵՐԱՆ. Ես... ես չեմ պնդում, բայց ինչումն է կայանում իմ յանցանքը...

Տ. ԵՐԱՆ. Ամեն բանում: Դու նրան այն աստիճանի երես ես տուել, որ նա արդէն սկսել է ոտձգութիւններ անել և աշխատում է իշխել իմ վրայ... դու այդ հաւանում ես...

Պ. ԵՐԱՆ. Ե՞ս... ասենք հոգեակս նա դեռ երիտասարդ է և բացի այդ մեր միակ զաւակն է. ինչ անենք, գուցէ մի փոքր բարկացել է, և...

Տ. ԵՐԱՆ. (Արագ ընդհատելով) Բարկացել է... յետոյ... միթէ որ և է յարգանք չըպէտք է տածէր նա դէպի ինձ, չէ որ ես նրա մայրն եմ... քեզ եմ հարցնում, զու իմ ամուսինն ես, բայց երբէք չեմ համարձակուի նրա խօսքերի մի քառորդն իսկ ամեցինձ...

Պ. ԵՐԱՆ. Ես խաղաղապէք մարդ եմ...

Տ. ԵՐԱՆ. Իսկ որդիդ կսւարար. խօսելիս միայն մի մուրճ էր պակաս որ խփէր զլիխս... չեմ հասկանում ումն է ելել նա:

Պ. ԵՐԱՆ. Իսկապէս, հոգեակս, մեր Սուրէնը մւմն է ելել...

Տ. ԵՐԱՆ. Հիմա կասես որ ինձ է ելել...

Պ. ԵՐԱՆ. Ես այդպիսի բան չասացի...

Տ. ԵՐԱՆ. Այդ էք պակաս որ ասէիր... Ա՛խ ես այսպէս գրգռուած եմ, մինչդեռ ամեն մի բոպէկարող են հիւրերը գալ... մենք լաւ կընդունենք նրանց այս տրամադրութեամբ... կարող ես գնալ. բայց տես անշնորհրաւթիւններ չանես և մանաւանդ չաշխատու քեզ ինտելիգենտի հովեր տալ, գա ոչ մի բանի. չեն նմա-

նի... դէ գնա՞.. գնա՞..

Պ. ԵՐԱՆ. Ես զնում ես, հոգեակս... (գնալով) Ես խաղաղասէր մարդ եմ, բայց ումն է ելել մեր Սուրբնը այդպէս կռուարար... զարմանալի է, Աստուած վկայ շատ զարմանալի է... (գնում է իր սենեակը):

Տ. ԵՐԱՆ. Ո՞ւֆ, գլուխս կորցրել եմ, բոլորսին կորցրել եմ...: (Գնում է խօհանոց):

(Պառագա. Դամիկմից երեսում են Սուրբը և նունիք):

ՏԵՍԻԼ 4

Սուրբն, Նունիք յետոյ Ստեփան

ՍՈՒՐԲՆ (Պեղծ ուրախութեամբ) Ուրիմն սիրելի քոյրիկ դու չափազնոց գոհ ես...

ՆՈՒՆԻՔ Այս չափազանց... գիտես ինչ կայ Սուրբն, մայրիկս ասում է որ ես մեծ տիկին պէտք է լինեմ և միշտ շրջապատուած լուսաւորուած մարդկանցով, դու ինչպէս ես կարծում, միթէ կը կարողանամ պահել ես ինձ այդ շրջանում, մայրիկն ասում է որ նրանք մեզ պէս չեն խօսում. Նրանցում տիրում է ծայրահեղ քաղաքավարութիւն և ասում է, պէտք է աշխատեմ որքան կարելի է շուտ ընդունակել այդ ձեռքը և ոճերը: Նա վստահացնում է որ եթէ ես ընտելանամ այդ սովորութիւններին, ես մեր շրջանի թագուհին կը լինեմ... (Յրձուանքով) դու կարող ես երես-

կայել, ես թագուհի պէտք է լինիմ...

ՍՈՒՐԲՆ Անմեղ երեխայ...

ՆՈՒՆԻՔ Այս, բայց երբ մտածում եմ որ ես պէտք է բաժանուեմ ձեզանից իմ սիրատիրում է և ես համարեալ կամենում եմ լաց լինել...

ՍՈՒՐԲՆ. Մի տիրիլ քոյրիկ, մենք միշտ քեզ հետ կը լինենք և դու կարող ես միշտ դիմել քո եղբօր խորհրդին...

ՆՈՒՆԻՔ Այս եղբայր:

ՍՈՒՐԲՆ Եւ մանաւանդ երբ որ և է անբաւականութիւն կըպատահի:

ՆՈՒՆԻՔ Բայց միթէ ամուսնութեան մէջ անբաւականութիւններ կը պատահեն... մայրիկը երբէք ինձ չէ ասել...

ՍՈՒՐԲՆ (Դիօնարախանալով) Այս քոյրիկս և այն էլ յաճախ, միթէ կենդանի օրինակները քո աշքի առաջ չեն: Զարմանալի է ճշմարիտ որ մայրիկը նոյն իսկ չէ նախազգուշացրել քեզ, հազար ու մի անբաւականութիւնների մասին, մինչդեռ դու կեանքի մէջ ես մտնելու, դու կին ես դառնալու. բայց չէ որ վաղ թէ ուշ եթէ որ և է գժբախտութիւն պատահի քո ամուսնական կեանքում, դու տանել չես կարող, որովհետեւ գաղափար անգամ չունես, քեզ ծանօթացրել են միայն կեանքի լաւ կողմերի հետ, բայց կեանքը, սիրելի երեխայ, լի է դառնութիւններով, մանաւանդ այն կեանքը, որը դու ես վարելու: Ի հարկէ ես չեմ պնդում որ քեզ անպայման անպատեհութիւններ են

սպասում, ոչ... բայց յամենայն դէպս, գուռ պէտք
է այդ միշտ ի նկատի ունենաս. (զեշտով) գուռ
պէտք է այդ ի նկատի ունենաս... երեակա-
յիր, գուռ ամուսնում ես մի չափահաս մար-
դի հետ, որը հարուստ է, ինքնազլուխ, կեան-
քում փորձուած մի մարդու հետ որը... որը...
բայց թող մնայ, թող մնայ իմ թանգարին
քոյրիկ, ցանկալի կը լինէք, որ երբ և իցէ գուռ
չստիպուէիր ակամայ ծանօթանալ այդ մարդ-
կանց կեանքի վատ կողմերի հետ;

ՆՈՒՆԵ Բայց գուռ ինձ վախեցնում ես.
Եթէ իմ նոր ընտանիքումն էլ շարունակ նոյն-
պիսի կոիմներ են լինելու, ինչպէս այստեղ,
ես աւելի լաւ կը համարեմ երբէք չամունա-
նալ... մայրիկը համոզում է որ այնտեղ հս-
ինքնիշխան տէր կը լինեմ եթէ կամենամ. .
ե... ե...

ՍՈՒՐԵՆ Եւ ինչ.

ՆՈՒՆԵ Եւ ասում է որ ամուսնու վերայ
իշխելու միակ ձեզ իր օրինակին հետեւն է:
ՍՈՒՐԵՆ (զրգուած) Այսինքն...

ՆՈՒՆԵ Նա խրատում է որ հենց առաջին
քայլից սկսեմ կոիմներ սարքել, միշտ յանդի-
մանեւ ամուսնուս, շարունակ դժգոհ լինել և
ասում է, այդպիսով միայն կարող եմ նրան
հաղատակիցնել:

ՍՈՒՐԵՆ (յուզուած) Բայց գուռ գրանով
մի անտանելի դժոխք կսեղծես քեզ համար
խեզ. քոյրիկս:

ՆՈՒՆԵ (զարմացած) Միթէ...

ՍՈՒՐԵՆ (յուզմունքով գգուելով) Իմ
թանգարին նունէ, աղաշում եմ քեզ մոռացիր
դրանք. ինձ լսիր, երբէք մի հետեւիր այդ խոր-
հուրդներին, դրանք, դրանք քեզ կարող են
դժբախտացնել, այդպիսի մի կեանք գուք չէք
կարող տանել մի տարի իսկ...

ՆՈՒՆԵ Ինչու ուրեմն հայրիկն ու մայրի-
կը տանում են այդ տեսակ կանքը:

ՍՈՒՐԵՆ Ա'խսիրելիս, հայրիկը հանդարտ
բնաւորութեան տէր է և միշտ խոյս է տալիս
կոփմներից. բայց և այնպէս դարձեալ անտա-
նելի է... աշխատիր քոյրիկս, ամուսնուդ լսել
և նրա խրատներից լաւերը միայն վերցրու:
Հեռու կաց կոփմներից, երկպառակութիւննե-
րից, գրանք միմիայն ընտանեկան խաղաղ
կեանքը քայլայերու են նպաստում. զապիր ա-
մուսնուդ քաղցրաբարոյութեամբ, եթէ անսանձ
է. համեստութեամբ և պարկեշտութեամբ, չը-
շլանաս քո նոր շրջանի փայլով, պճնասէր և
փաղաքչող երիտասարդների խօսքերից չհա-
պուրունս, որպինետե նրանց շատերի զարդա-
րուն արտաքինի տակ թագնուած է մի մոլի
ներքին. . այդ ոսկեզարդ կեղևները պարունա-
կում են շատ անգամ մի որդնակեր ու փտած
միջուկ...

ՆՈՒՆԵ (նետզնետէ երկիրդ զգալով) Դու
ինձ բոլորպին այլ կերպ ես պատկերացնում
կեանքը. ուրեմն էլ ուրէ կեանքի երջանկու-
թիւնը:

ՍՈՒՐԵՆ Կեանքի վատ կողմերը միշտ

պէտք է ի նկատի ունենալ, որպէսզի մարդ կարողանայ միջոցներ պատրաստել նրանց գէմ կռուելու համար:

ՆՈՒՆԵ Ուրեմն ինչո՞ւ էր մայրիկը բոլոր ըօդին հակառակն ասում:

ՍՈՒՐԵՆ Մայրիկը հակառակն է ասել,
որովհետև նա այդ տեսակ է ըմբռնել կեանքը.
բայց այդ հասկացողութիւնը սխալ է, կեղծ է.
եթէ կամենում ես երջանկութիւն ձեռք բերել
սիրելի քոյրիկս, անլայման պէտք է համերաշխ
լինիս. ամուսնական երջանկութեան գլխաւոր
սիւնն է դա:

(Դրսից գանգի ճայն)

ՍՈՒՐԵՆ (ժամացոյցը նայելով) Այս Աս-
տուած իմ գալիս են:

ՆՈՒՆԵ (վախեցած) Ի՞նչ, արդէ՞ն:

ՍՈՒՐԵՆ Գնանք քոյրիկս, մայրիկը կը-
դունէ նրանց:

(Նունեն գնում է դահլիճով)

(Կրկին գանգի ճայն)

ՍՏԵՓԱՆ (դուրս է գալիս խոհանոցից)

ՍՈՒՐԵՆ Մայրիկն կանչիր (գնում է)

ՍՏԵՓԱՆ. (Էտ է գնում խոհանոց)

(Կրկին գանգի ճայն)

ՏԵՍԻԼ 5

Տ. Երանեան, պ. Երանեան, յետոյ Արտեմ, տ.
Սուլբեզեան, Մալայեան նունի եւ Սուրեն

Տ. ԵՐԱՆ. (ներսից) Սաեփան շտապիր:
(դուրս է գալիս խոհանոցից, անցնում է դէ-
պի III դուռը իրարանցումով) Ո՞րտեղ է
Գէսրգը: Սաեփան շուտ բաց արա դուռը և
ներս հրաւիրիր:

(Կրկին գանգ ուժգին)

ՍՏԵՓ. (գնում է աջ I պլանով)

Տ. ԵՐԱՆ. Գէսրգ դուրս եկ գալիս են:

Տ. ՍՈՒԼԲԵԶ. (նախասենեակում) Արդեօք
պարսնը և տիկինը կարող են մեզ ընդունել...

Տ. ԵՐԱՆ. Գէսրգ շուտ:

Գէսրգ (դուրս գալով) ես պատրաստ եմ
հոգեակս:

ՍՏԵՓԱՆ (նախասենեակում) Համեցէք,
համեցէք, տիկինը և պարսնը վաղուց է որ
ձեզ են սպասում:

Տ. ԵՐԱՆ. (գրգուռած) տիմար:

Պ. ԵՐԱՆ. Ինձ հետ ես հոգեակս:

Տ. ԵՐԱՆ. Լոլի:

(նախասենեակում շշուկ: Ստեփան բաց է
անում դուռը. մտնում են նախ տ. Սուլբե-
զեան յետոյ Արտեմ, յետոյ Մալայեան

ՍՏԵՓ. (Անցնում է խոհանոց)

8. ԵՐԱՆ. Համեցէք, համեցէք:
 8. ՍՈՒԼԲԷԳ. (ծանօթացն ելով) Եհա որ-
դիս, պլ. Մալաեան մեր տան լաւ բարեկամը:
 8. ԵՐԱՆ. Ամուսինս: (Ընդհանուր բարե-
ներ)
 Պ. ԵՐԱՆ. (Բարեկալով առ. Սուլբէգեանին
և Արտեմին) Ես հրճանքի գաղաթհակէտին
եմ հասնել:
 8. ՍՈՒԼԲԷԳ. Իսկ ուր է օրիորդ նունին:
 Պ. ԵՐԱՆ. (Չորս կողմը նայելով) Այս,
նունին և Առողջութեան:
 8. ԵՐԱՆ. (ցած) Լոիր. (բարձր) նրանք
իսկոյն կրգան:
 ՄՔԱՅՅՅ. (կողմ) Հետաքրքիլ է.
 Պ. ԵՐԱՆ. (մօտենալով Արտեմին) Ես շատ
ուրախ եմ պլ. Արտէմ, որ դուք ձեզ ներկայու-
թեամբ պատուեցիք մեզ տունը...
 ԱՐՑԷՄ (բողոքելով) Օ՞հ ինչեր էք ա-
սում, պլ. Երանեան:
 8. ՍՈՒԼԲԷԳ. Պ. Երանեանը չափազանց
ուրախ մարդ է:
 8. ԵՐԱՆ. (առ. Սուլբէգեանին) Նստեցէք
ինիդրեմ, ձեզ նման թանգագին հիւրեր մենք
շատ սակաւ ենք ունենում: (նստում են դիւա-
նի վերայ նո խօսում)
- ՄՔԱՅՅՅ. (կողմ) Իսկ ինձ մարդի տեղ
դնող չկայ, առ զբողը տանի:
- Պ. ԵՐԱՆ. Եւ այդպէս դուք մտադրուել
էք ամուսնահալ իմ նունին հետ, ինչ կայ, լաւ
միտք է...

8. ԵՐԱՆ. (կամենալով կտրել ամուսնու
խօսքը) Գէորգ, զնա կանչիր Սուլբէնին և նու-
նին...
 8. ՍՈՒԼԲԷԳ. Այս ինչ նեղութիւն, երեկ
նրանք շուտով կը գան...
 Պ. ԵՐԱՆ. Այն հոգեակտ երեկ նրանք շու-
տով կը գան:
 8. ԵՐԱՆ. Առա որ սպասում ենք..., նստե-
ցէք խնդրեա պարօն Արտէմ:
 (Պ. Երանեան զնում է)
 ԱՐՑԷՄ (խոնարհութ) ան և անում են
նստում աշ՝ կլար սեղանի մօտ)
 ՄՔԱՅՅՅ. (մօտենալով Արտեմին ցած) Քա-
ղաքաւարութեան իսկական տիպարներ, ստ-
ահանան տանի:
 ԱՐՑԷՄ Լոիր և նստիր: (Մայակեան նըս-
տում և նրա մօտ)
 8. ԵՐԱՆ. (ջարունակելով իրանց սկրած
խօսակցութիւնը) Գովեստ շինի տիկին, բայց
դուք շուտով ինքներդ կը համոզուէք:
 8. ՍՈՒԼԲԷԳ. Ես հաւատացած եմ, սիլե-
լի տիկին որ այնպիսի ձեռքերի տակ, ինչպի-
սին ձերն է, իմ հարոնացուն շատ լաւ կրթու-
թիւն պէտք է ստացած լինի:
 8. ԵՐԱՆ. Չափաղանց զգացուած եմ ձեզ
խօսքերից:
 ՄՔԱՅՅՅ. (ցած Արտեմին) Զոքանչդ ցան-
ցելը ուսեւ է լարել:
 Պ. ԵՐԱՆ. (մտնում և ետեւից նունին
հազար սպիտակ, աջքերը խոնարհած են չա-

փազանց լուրջ) Ահա և մենք:

(Արտեմ վեր և կենում, Մալայեան նոյնպէս, տ. Սուլբէգեան մօտենում և հրձանքով)

Տ. ՍՈՒԼԲԷԳ. Եկ համբուրեմ քեզ թանգագին զաւակս: (համբուրում է) բարե ձեզ պ. Սուրէն, խնդրեմ ծանօթանաք, որդիս Արտէմը, պ. Մալայեանը, Արտէմի լաւագոյն ընկերներից մինը:

ՍՈՒԼԲԷՆ Բարե ձեզ. (ձեռք և տախս երկուսին)

Տ. ԵՐԱՆ. Նունէ բարեկիր պարոննեղին:

ՆՈՒՆԻ (մօտենում և քաղաքավարի՝ քաշուելով) Բարե ձեզ պարոններ. (բարեւամ և Արտէմին, յետոյ Մալայեանին)

ՏԻԿԻՆՆԵՐԸ (նստում են և խօսում)

Տ. ԵՐԱՆ. Նունէ, դրադեցրու Արտէմ Ալէքսանդրովիչին:

ՆՈՒՆԻ (Արտէմին) Արտէմ Ալէքսանդրովիչ, բարեհանեցէք նստիլ: (նստում են)

ՄԱԼԱՅ. (կողմ) Տեղս բռնուեց: (նայում է շուրջը տեսնելով Սուրէնին խորքում կանգնած, մօտենում և նրան) Ձեր քոյլը մի գանձէ և Արտէմ Ալէքսանդրովիչը թող պարծենայ որ այդպիսի մի կենակից է ունենալու:

ՍՈՒԼԲԷՆ (սառն) Զափազանց զգացուած եմ պարոն ձեր գովեստներից:

ՄԱԼԱՅ. (նեռանայով կողմ) Գրոյլը տանի, ինչ անմատչելին է եղել: (տեսնելով պ. Երանեանին) պ. Երանեան, հիացած եմ ձեր ընդունելութեամբ:

Պ. ԵՐԱՆ. Ես յուզուած եմ պարոն.

ՄԱԼԱՅ. Ինչու:

Պ. ԵՐԱՆ. Գեռ հարցնում էք: Եմ աղջիկս լաւ ձեռքերի մէջ է ընկնելու: Պ. Սուլբէգեանը ազնիւ և լուրջ մարդու տպաւորութիւն է թօղնում և ես յօյս ունեմ որ երջանիկ կը լինեն:

ՄԱԼԱՅ. Օ՛ անշուշտ, անշուշտ: (կողմ) Եթէ միայն Մանեան արգելք չլինի: (շարունակում և խօսել)

ՆՈՒՆԻ Ինչ խելացին էք Արտէմ Ալէքսանդրիչ, ես այսպիսի խօսակցութիւն առաջին անգամն եմ լսում: Այդպիս ուլենմն: Ամուսինները երջանիկ են միմիայն սիրով, իսկ առանց սիրոյ երջանկութիւն չկայ... (հիացմունքով) ախ ինչ լաւ է, ինչ լաւ է:

ԱՐՑԵՄ Այս, թանգագին օրիորդ (շարունակում և խօսակցել)

Տ. ԵՐԱՆ. (տ. Սուլբէգեանին) Ի հարկէ դուք ձեր որդուն աւելի լաւ էք ճանաշում քան թէ ես, բայց և այնպէս գլխաւորը այն է, որ որ նա սիրէ նունէին:

Տ. ՍՈՒԼԲԷԳ. Անտարակոյս, գլխաւորը սէրն է և գոտահ եմ իմ որդու վրայ...

Տ. ԵՐԱՆ. Խօսք չկայ և իմ միակ ցանկութիւնն է որ պ. Արտէմը միշտ գլուէ ու փայփայէ իմ նունէին, գիտէք, նա շատ քննոյշ է և դիրագրգիռ բնաւորութեան աէլ է և չըզարմանաք եթէ երթեմն, երթեմն չնշին բաներից գրգռուելով քմահաճոյքներ ունէ. նա

դեռ երեխայական բնաւորութիւն ունի և այդ ամենը հասակի հետ կանհետանան...

Տ. ՍՈՒԼԲԵՔ. Դուք վստահ եղք տիկին, որ Արակմը կը կարողանայ աննկատելի կերպով այդ կապրիզները ոչնչացնել:

ՄՈՒՐԻՆ (որ նստած էր մի անկիմնում աջ խորքում, ուշադրութեամբ նետեւամ է խօսակցութեանը, մօր խօսքերին վեր է կացել, ուզում է խօսել, բայց զսպում է իրան) ՆՈՒԻՆ ԶԷք կամենայ մի փոքր անցնել դահիճ Ազատէմ Ալէքսանդրովիշ:

ԱՐՑԷՄ Ուրախութեամբ օրիորդ: (Վեր է կենում)

Տ. ԵՐԱՆ. ՆՈՒԻՆ, պարոնի համար մի բան նուռագիր...

ՄԱԼԱՅ. Ախ օրիորդը նուռագմաւմ է բայց սատանան տանի, ես պաշտում եմ երաժշտութիւնը, մանաւանդ դաշնամուրը:

Պ. ԵՐԱՆ (ինքնաբաւական տոնով) Օ՛ մենք մեր կարողացածը արել ենք մեր դաւակների կրթութեան համար: Սուրէնն էլ ջութակի վրայ է նուռագում:

ՄԱԼԱՅ. ՄԻՌԵ: Զութակը երաժշտական գործիքների մէջ ամենայուղողն է. արդեօք մենք պատիւ չէնք ունենայ պ. Սուրէնի նւագիլը լսելու:

ՄՈՒՐԻՆ (ծայրահեղ զրգուն) Ճատ ցաւում եմ, պարոն, բայց ես շատ վատ նւագող եմ: (զնում է դանիիմից արագ)

ԱՐՑԷՄ և ՆՈՒԻՆ (նոյնպէս զնում են)

ՄԱԼԱՅ. (Լսող) Վայրենիների երկրիցն է եկել ինչ է...

Տ. ԵՐԱՆ. (կամենալով ցրուել տպանութիւնը) ՆՈՒԻՆ գոնէ մի ուրախ բան նւագիր: ՆՈՒԻՆ է Ճատ բարի մայրիկ: (Արտեմին) Պուր սիրում էք ուրախ եղանակները:

ԱՐՑԷՄ (յուռ. խանարձում է զլուխը): ՆՈՒԻՆ (սկսում է զարք եղանակ հնագել):

ՄԱԼԱՅ. (պ. երանեանին) Զեր որդին հիւանդ է:

Պ. ԵՐԱՆ. Զզային է, ուրիշ ոչինչ.

ՄԱԼԱՅ. Աշխ շատ ցաւում եմ, խորհուրդ տուէք որ բժշկի զիմէ:

Տ. ԵՐԱՆ. (ա. Սուլբեկեանին) Ես միշտ ասել եմ յարգելի տիկին, որ արու զաւակների կրթութիւնը հայրերին է վերաբերում. իսկ այժմ շատ ցաւում եմ, որ ես չստանձնեցի Սուրէնի կրթութիւնը և հայրը նրան այն աստիճան վշացրեց, որ նրանից մի ըմբռատ և կոպիտ մարդ պատրաստեց: (Եռանեն ջարունակում է նւագիլ, Արտեմ կանգնած է մօտք)

Տ. ՍՈՒԼԲԵՔ. Ի զուր էք մեղաղում ձեր որդուն, մի զուցէ վատ է արամաղբուած:

Տ. ԵՐԱՆ. Ես համոզուած եմ խօսում:

ՄՏԵՓ. (մտնում է խոհանոցից եւ անցնում դահիճ ինքնաեռու):

Տ. ԵՐԱՆ. (տեսնելով Ստեփանին) Զէկը կամենալ տիկին մի բաժակ թէյ խմել.

Տ. ՍՈՒԼԲԵՔ. Ուրախութեամբ:

Տ. ԵՐԱՆ. (վեր կենալով գնալիս) Գէորգ,
հրաւիրիր պարտնին թէլի:

(Գնում են դահլիճն և նստում հասարակու-
թինից տեսանելի)

Պ. ԵՐԱՆ. Պ. Մալայեան գնանք թէլ
խմենք: (Երաժշտութիւնը դադարում է):

ՄԱԼԱՅ. (կողմ) Գրղղ տանի այս գաւա-
ռացիներին, շամպայնի տեղ թէլ: Ուրախու-
թեամբ պկ. Երանեան, ուրախութեամբ: (գնում
են ուսիջիմ):

ՏԵՍԻԼ 6

Արտեմ և Նունե.

ՆՈՒՆԵ և ԱՐՏԵՄ (գալիս են դահլիճից
դեպի ձախ նախարեմ դիւնանի մօս)

ԱՐՏԵՄ Դուք միանդամայն արևեստով էք
նւագում:

ՆՈՒՆԵ (միամիտ) Այն, մայրիկն էլ միշտ
այդպէս է ասում:

ԱՐՏԵՄ Ուրեմն մայրիկը լաւ է հասկա-
նում:

ՆՈՒՆԵ նստենք եթէ ցանկանում էք...

ԱՐՏԵՄ Ես ձեր հլու հպատակն եմ: (նըս-
տում են)

ՆՈՒՆԵ (յանկարծ) Խակ դուք դաշնամուր
ունէք...

ԱՐՏԵՄ (զարմացած) Այն.

ՆՈՒՆԵ (քիչ լոռութիւնից յետով) Ասացէք
խնդրեմ Արտէմ Ալէքսանդրովիչ... բայց ոչ, ոչ,
յետոյ...

ԱՐՏԵՄ Եւ ինչո՞ւ ոչ այժմ օրիորդ:

ՆՈՒՆԵ Ե՞ս մի բան պէտք է հարցնէի ձե-
զանից, բայց մտածեցի որ մի գուցէ անյար-
մար է:

ԱՐՏԵՄ Ի՞նչ բանի վերաբերեալ...

ՆՈՒՆԵ Ի՞նչ բանի վերաբերեալ... Նախ
առացէք ես ձեզ յարմար ամուսին եմ:

ԱՐՏԵՄ Դուք մի թարմ և թանգագին
ծաղիկ էք:

ՆՈՒՆԵ (աջքերը խոնարհեցնելով) մի գո-
վէք խնդրեմ:

ԱՐՏԵՄ Դա գովեստ չէ, դա իրականու-
թիւն է:

ՆՈՒՆԵ Ուրեմն ասացէք ինձ...

ԱՐՏԵՄ Եւ ինչո՞ւ անպատճառ «ասացէք»

ՆՈՒՆԵ Բայց մայրիկն ասում է որ ան-
պատշաճ է եղակի խօսելը...

ԱՐՏԵՄ Դրանք անտեղի ձեականութիւն-
ներ են միայն այսինքն մեր մէջ...

ՆՈՒՆԵ (զարմանքով) Միթէ:

ԱՐՏԵՄ Անշուշտ.

ՆՈՒՆԵ Ուրեմն ես կարող եմ համարձակ
խօսել քեզ հետ:

ԱՐՏԵՄ Անտարակոյս. (բռնում և ձեռքը)

ՆՈՒՆԵ Ախ մի բռնիր իմ ձեռքը...

ԱՐՏԵՄ Եւ ինչո՞ւ...

ՆՈՒՆԵ Չէ որ դա վատ է...

ԱՐՏԵՄ (բաղցր) Այստեղ ոչինչ վաս բան
չկայ... .

ՆՈՒՆԵ Այս... լաւ... ես այդ չգիտէի...
ԱՐՏԵՄ Դու գեռ շատ բան չգիտես ահ-
մեղ երեխայ. .

ՆՈՒՆԵ Ո՞չ, ես այնքան էլ տպէտ չեմ...
ԱՐՏԵՄ Ա'ի ո՛չ, ես այդ չուզեցի ասել...
ՆՈՒՆԵ Հապա ի՞նչ...
ԱՐՏԵՄ (զրգիռով) Թանգագին նունէ...
ՆՈՒՆԵ Բայց դու ցաւեցնում ես ձեռքս...
Հանգիստ կաց...

ԱՐՏԵՄ (բաց և բոլենում ձեռքը) Ի՞նչ
էիր հարցնում...

ՆՈՒՆԵ (կրկին զւարքացած) չա ահա
ինչ... երբ մենք ամուսնանանք, պէտք է կըու-
մենք միմեանց հետ...

ԱՐՏԵՄ Կուել. ի՞նչո՞ւ.

ՆՈՒՆԵ Բայց չի՞ որ ամուսնացածների
մէջ այդպիսի բաներ պատահում են:

ԱՐՏԵՄ Այս պատահում են, բայց կարե-
լի է այնպէս անել, որ ոչինչ չպատահի...

ՆՈՒՆԵ Եսկ ի՞նչ պէտք է անել, որ ոչինչ
չպատահի...

ԱՐՏԵՄ Պէտք է սիրով և հաշտութեամբ
ապրել, միմեանց խորհուրդներին լսել, զուր
տեղը կոփներ չորսնել...

ՆՈՒՆԵ Ահա թէ ի՞նչ... լաւ... ես խօսք
ևմ տալիս սիրով և հաշտութեամբ ապրել...

ԱՐՏԵՄ Դու մի պաշտելի արարած ես.
(մօտենում է)

ՆՈՒՆԵ Ի՞նչ ես ուզում անել...
ԱՐՏԵՄ Ես կամենում եմ ստանալ սիրոց
միակ գրաւականը:
ՆՈՒՆԵ Ի՞նչ բանէ այդ:
ԱՐՏԵՄ Մի համբոյք թանգագին նունէ...
ՆՈՒՆԵ (վախեցած) համբոյք...
ԱՐՏԵՄ Չէ որ ես քո նշանածն եմ...
ՆՈՒՆԵ Ուրեմն իրաւունք ունես ինձ համ-
բուրելու:

ԱՐՏԵՄ Միայն քո թոյլտութեամբ թան-
գագինս.

ԾԵՍԻՆ 7

Նոյնը, Մալայ Եան, պլ. Երանեան, յԵտոյ տ.
Երանեան, տ. Սուլբեզեան

ՄԱԼԱՅ. (Երեսում է խորքավ) ՆՈՒՆԵ Լաւ եթէ իրաւունք ունես ես
թոյլ եմ տալիս:

ԱՐՏԵՄ (համբուրում է մի քանի անգամ)

ՄԱԼԱՅ. (կօղմ) Թռչնակը բռնուեց, սա-
տանան տանի: (նազար է):

ՆՈՒՆԵ (քաջուելով) Մարդ կա...

ԱՐՏԵՄ (վեր է կենում, տեսնելով Մա-
լայեանին կօղմ) Սրիկայ...

Պ. ԵՐԱՆ. (մտնում է դահլիճ)

ՄԱԼԱՅ. Ծնորհակալութիւն թէյի համար
յարգելի հիւրնկալ... պէտք է խոստովանել որ
հրաշալի էր...

Պ. ԵՐԱՆ. (մօտենալով) Եսկ դուք պլ. Ար-

տէմ, ինչու մի բաժակ թէյ չխմեցիք:
ՄԱԼԱՅ. Նըսհք թէյ խմելուց աւելի կարևոր գործով էին զբաղուած:
ԱՐՏԷՄ Մանք իսկոյն կը խմնեք:
ՆՈՒՆԵ Այս հայրիկ, իսկոյն գնանք դահլիճ Արտէմ, (գնում են) **ՄԱԼԱՅ.** (կողմ) Ա՛խ, արդէն Արտէմ...
ՕՀՕԿՈՒՇ...

Պ. ԵՐԱՆ. Ինչ հիանալի զոյգ են համամատ...

ՄԱԼԱՅ. Այս, այն խօսք չկայ հիանալի են.
 Յ. Տ. ԵՐԱՆ. { (գալիս են դահլիճից)

ՄԱԼԱՅ (տ. Սուլբեկեան աջքով ցոյց և տայիս նրանց)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (մօտենալով Մալայեանին) Ի՞նչ է պատահել...

ՄԱԼԱՅ. Մի նորութիւն (ցած պատմում է).

Տ. ԵՐԱՆ. (ամուսնուն) Սուլբէնին այս-
տեղ ուղարկիր, անյարմար է:

Պ. ԵՐԱՆ. Հոգեակո գուցէ ինձ շլոի...

Տ. ԵՐԱՆ (գրգուռած) Ուրեմն ես կը դնամ, ես միշտ առել եմ, որ զունքան փշացրել ես (գնում է)...

Պ. ԵՐԱՆ. (Ետեկից գնալով) Թայց հոգեակո, իղուր ես նեղանում, ես կը դնամ. զունք հիւրերի մօտ: (գնում է)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Նշանակում է նա հաւանել է:

ՄԱԼԱՅ. Ապացոյցներով հաստատուած, յարգելի տիկին:

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ուրեմն ես կարող եմ անցնել բուն խնդրին:

ՄԱԼԱՅ. Առանց այլ և այլի.

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (նայելով շուրջը) Ո՞ւր գնացին:

ՄԱԼԱՅ. Ա՛խ սատանան տանի, փախել են..

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (յանդիմանական) Պ. Մալյեան:

ՄԱԼԱՅ. Գիտէք, իսկական գաւառացիներ են մանաւանդ երիտասարդը:

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Նա իմ վրայ լուրջ երիտասարդի տպաւորութիւն թողեց...

ՄԱԼԱՅ. Իսկ իմ վրայ, թոյլ տւէք ասել, չափազանց անտաշ և կոպիտ. ինչպէս երկուս է սրանք քաղաքավարութեան մասին հասկացողութիւն անգամ չունեն: Մի նայեցէք խընդրեմ, սա ի՞նչ է: Հիւր ենք եկել, և տանտէրեց չկան:

ԱՐՏԷՄ և ՆՈՒՆԵ (Երեւում են խորքում)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Լսեցէք, չար: (մօտենալով Արտէմին) Ներիր սիրելիս որ մի քանի բողէով խեմ սրան քեզանից:

ԱՐՏԷՄ. Օ՛ մայրիկ:

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ապա սիրելի աղջիկս, յոյս ունեմ որ գու ինձ հետ սրտաբաց կը լինես...

ՆՈՒՆԵ Լսում եմ ձեղ, տիկին...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Տիկին. ինձ այսուհետև ուղղակի մայրիկ անուանիր: (քիչ քիչ խօսելով)

ամենում են դահլիճ եւ աներեւոքանում):

ՏԵՍԻԼ 8

Արտկմ եւ Մայական

ՄԱԼԱՅ. (Նայելով նրանց ետևից, շնացնում է ցուցամատը շարժելով)

ԱՐՏՀՄ Ի՞նչ ես շւացնում, յիմար:

ՄԱԼԱՅ. նու սիրելիս, դու կոյր լինելու ես որ շտեսնես:

ԱՐՏՀՄ Ի՞նչ բան...

ՄԱԼԱՅ. Մի շուրջդ նայիր.

ԱՐՏՀՄ Յետոյ:

ՄԱԼԱՅ. Ի՞նչ բանի է սա նման: Այսաեղ երկի ես եմ տանտէրը, իսկ հիւրը դու. կամ աւելի շուտ տան աէրը դու ես, իսկ հիւրը ես որովհետև այսօրուանից իրեն փեսայ, դու այս տան անդամ ես հաշտում, և երեխ նրանք արդին ընտելացան այդ մտքին ու այսպէս ասած sans ceremonie թողին և հեռացան մինը աջ, միւսը ձախ. Հիանալի ոռվորութիւններ ունեն այս գրողը տարած գաւառացիները, մտածելն անդամ սարսափելի է, հրաւիրում են քաղաքի առաջնակարգ ընտանիքների դաւակներին և յանկարծ շամզայնի տեղ... թէյ... ֆէ.

ԱՐՏՀՄ Բերանդ շյողնեց.

ՄԱԼԱՅ. Ես ինձ սաստիկ վիրաւորուած եմ զգում, սաստիկ, մեղ ծաղրում են ինչ է:

ԱՐՏՀՄ Այստեղ ես ոչ մի ծաղր չեմ տեսնում:

ՄԱԼԱՅ. Ոչ մի ծաղր չէ, ինչպէս տեսնում եմ կորցրիր թէլդ:

ԱՐՏՀՄ Ի՞նկացի բան երբէք չես ասի:

ՄԱԼԱՅ. Ես բեզ չեմ էլ մեղաղդրում, քո զրաթիւնը ի հարկէ անյարմար չէ, դու տան անդամ ես. բայց իմը, իմը, ահա մի ամբողջ ժամ է որ ես այստեղ եմ և ատիպուած եմ լսել սրա նրա յիմարութիւնները, մէկի կոպառութիւնը, միւսի գուենիկ վերաբերմունքը, որ նոյնիսկ թշնամական է: Ոշ այդ, չափազանց է ես գնում եմ...

ԱՐՏՀՄ Դու ուզում ես խայտառակել մեզ:

ՄԱԼԱՅ. Ոչ, ես գնում եմ:

ԱՐՏՀՄ Ո՞ւր, ինչեր ես խօսում:

ՄԱԼԱՅ. Մ' թշուառ բարեկամս, մեղ մնում է այսուհետև միայն ողբալ քէզ...

ԱՐՏՀՄ Դէ եթէ իսկապէս դու կամենում ես իմ տբամաղբութիւնը վշացնել, աւելի լաւ կանես որ հեռանաս...

ՄԱԼԱՅ. Ասացէք ինդրեմ, տրամաղբութիւն վշացնել., ես ոչ մի տեղ չեմ գնում:

ԱՐՏՀՄ Լօգիկու կայ:

ՄԱԼԱՅ. Լօգիկայ թէս չկայ, բայց և այնպէս մնում եմ որպէսզի տեսնեմ թէ մինչե ուր է հասնելու սրանց անտաշութիւնը...

ԱՐՏՀՄ Դէ, դէ դէ, ինդրեմ շատ առաջ շգնաս:

ՄԱԼԱՅ. (մօտենալով) Գիտես ինչ, զգուշացիք գայլի ատամներից...

ԱՐՑԵՄ (Անհանգիստ) ի՞նչ ես ուզում ա-
սել...

ՄԱԼԱՅ. Ես այն եմ ուզում առել, որ օ-
րիորդ նունչն ունի մի հզօր պաշտպան, որի
ձեռքից ազատուելը դժուար է... այս ականջիդ
ող արա.

ԱՐՑԵՄ Մայլը, բայց նա...

ՄԱԼԱՅ. Ախ ինչ մայլ... եղբայրը, մի
կոպիտ գաւառացի որ ի պահանջել հարկին,
կողերդ կը փրկ...

ԱՐՑԵՄ (մտածունքի մեջ և ընթում)
ՄԱԼԱՅ. (բիգուետովից շրացնում է)

ՏԵՍԻԼ 9

Նոյնք եւ Սուրեն.

ՍՈՒՐԵՆ (Երեսում է խորքում)

ՄԱԼԱՅ. (դադարում է սուրենոց եւ
պատշաճ դիրք և ընդունում)

ՍՈՒՐԵՆ ներեցէք պ. Մալայեան, թէն
մի փոքր անյարմաս է, բայց ես պէտք է պա-
րոնին մի քանի խօսք ասեմ:

Տ. **ՍՈՒՐԵՆիդ.** Եւ նՈՒՆՔ (անցուդարձ են
անում դանիմում երեւելով հասարակութիւ-
նից):

ՍՈՒՐԵՆ Դուք խնդրեմ շվեյտորուէք

ՄԱԼԱՅ. Ախ խնդրեմ, խնդրեմ... (կողմ)
գայլի ատամները ըլ՛ը... (գնում է դանիմ
եւ մօտենում տ. Սուրենիմ ու. Նունին,
որոնք երբեմն կանգ առնելով երբեմն ման-

զայով խօսում են: Յետազայ խօսակցութեան
ժամանակ, մի փոքր յետոյ երեսում են պ.
եւ տ. Երանեան, Մալայեանը գնում է նրանց
մօտ եւ այսպիս խօսակցութիւնը շարունակ-
ուում է, ու յետոյ քիչ քիչ անտեսանելի են
լինում հասարակութիւնից)

ԱՐՑԵՄ ես պատրաստ եմ լսել ձեղ պ.
Սուրեն:

ՍՈՒՐԵՆ նստենք եթէ կամենաք...

ԱՐՑԵՄ ինչպէս ձեզ հաճոյ է: (նստում են)

ՍՈՒՐԵՆ (փոքր պառուզայից յետոյ, սկը-
սում է լուրջ՝ որ գրեք խստութեան և հաս-
նում) Ես ի հարկէ եղբէք չէի ձանձրացնի ձեզ,
եթէ հարցը իմ քրոջ երջանկութեան շվերա-
բերէր, կամ աւելի ճիշտն ասած ես կամենում
եմ վստահ լինել, որ իմ քոյրը ամուսինանալով
ձեզ հետ երջանիկ է լինելու:

ԱՐՑԵՄ (անհանգիստ) Բացատրեցէք պա-
րոն.

ՍՈՒՐԵՆ Դուք արիստոկրատի տիպար էք,
ինտելիցիանտ էք, իսկ մենք պարզ գաւառացի-
ներ, այնուամենայնիւ ես երբէք թոյլ չեմ
տալ ինձ, որ դուք երբ և իցէ տեղիք ունե-
նաք ծիծաղելու մեր տիմարութեամ. վրայ...

ԱՐՑԵՄ Պարոն...

ՍՈՒՐԵՆ Թոյլ տուէք ասել որ գէթ իմ
կողմից շափաղանց մեծ անհեռատեսութիւն
կը լինէր նետել իմ քրոջը մի անծանօթի գիր-
կը, որի անցեալ և ներկայ կեանքը ինձ յայտ-
նի չլինէր: Ես, պարոն, թոյլ տուէք ասել,

գիտեմ ձեր անցեալը և ներկան, ահա թէ ինչի համար ես ստիպուած եմ կասկածել իմ քրոջ երջանկութեան համար...
ԱրծէՄ (հետզմնտէ անհանգիստ) Պ. Սուլըն...

ՍՈՒԼԻՔՆ Դուք վճռել էք արդէն իմ քրոջ ձեռքը ինդրել...

ԱՐԾԷՄ Եթէ... եթէ որ և է արգելը չը լինի ձեր կողմից, այսինքն ձեր և ձեր ծնողաց կողմից, ես վճռել եմ...

ՍՈՒԼԻՔՆ Զատ ցաւում եմ:

ԱՐԾԷՄ Ի՞նչպէս պարո՞ն...

ՍՈՒԼԻՔՆ Ես հաւատացած էի պարոն որ դուք, իբրև հասկացող և փորձառու մարդ, ի նկատի կունենայիք երկու կեանքերը, մինը յաղեցած, իսկ միւսը թարմ, անկեղծ, և կը մերժէիր...

ԱՐԾԷՄ (ապշած) Դուք ինձ անյարմար դրութեան մէջ էք զնում...

ՍՈՒԼԻՔՆ (զգացմունքով) Իմ քոյրը պ. Սուլբէգեան, անարատ է և միամիտ. նրան անծանօթ են կեանքի արատները, ամուսնական անհաւատարմութիւնը, ընտանիքան բռնակալութիւնը... նա գաղափար չունի այն բանի մասին որ ամուրիները նախ քան ամուսնութիւնը կարող են զեղիս ու անառակ կեանք վարած լինել, նրան անծանօթ են ձեր շրջանի բարքերը, մոլութիւնները, կեղծիքը. նա լցուած է հաւատով դէպի աղադայ կեանքը և յոյս ունի որ ամուսնութիւնը կը աղյ նրան

քարեբախտութիւն և երջանկութիւն: Պ. Սուլբէգեան ձեզ եմ հարցնում, ինչ կը լինի եթէ նա յուսախտի լինի և կարճ ժամանակում հիասթավուի. դուք հաստի մտքի տէր էք և ձեր առաջադրութիւնը պէտք է հաստատ հիմքի վերայ գրուած լինի. դուք որ ճաշակել էք կեանքը իր ամեն կողմովը...

ԱՐԾԷՄ (բողոքի արտայալտուրեամբ) Օ-այդ պարոն...

ՍՈՒԼԻՔՆ Եւ մինչև այս վայրկեանիս պահում էք մի սիրուհի, մի ինչ որ տ. Գառնիկեան...

ԱՐԾԷՄ (սարսափած խօրքը նայելով) Ի սէր Աստուծոյ, մայրս կարող է լսել...

ՍՈՒԼԻՔՆ Կարդղ էք խոստանալ որ ամուսնահալով իմ քրոջ հետ գուք մոռացութեան կը տաք այդ անցեալը. Ես ձեզ կստահանում եմ մի անմեղ և անարատ աղջիկ, խոստանում էք արդեօք իրականացնել նրա երազները և լինիլ հաւատարիմ ամուսին, այնպիսին ինչպիսին հարկաւոր է իմ մատաղահաս քրոջը:

ԱՐԾԷՄ (զգացմունքով բօնելով նրա ձեռքը) Ես խոստանում եմ հաւատարիմ ամուսին լինել և իրականացնել նրա երազները:

ՍՈՒԼԻՔՆ (սեղմելով ձեռքը) Ջնորհակալ եմ, իս ձեր այդ խոստումը կը լսեմ ընդհանուրի ներկայութեանը... (վեր կենալով գնում է դէպի խորքը) շամպայն, շամպայն...

ՏԵՍԻԼ 10

Նոյնք, Մալայեան, պ. Երանեան, տ. Երանեան, տ. Սուլբէգեան եւ Նունե.

ՄԱԼԱՅ. (արագ Երեւանով՝ կողմ) Միսալ շլսեցի արդեօք...

(Տ. եւ պ. Երանեան, տ. Սուլբէգեան եւ Նունե են զայիս են դանիին)

Տ. ԵՐԱՆ. (հիացած) Դու շամպայն եւ կամենում սիլբէլի զաւակս.

ՍՈՒԼԲԷՆ (արախ) Այն մայրիկ, կեանքիու մէջ առաջին անգամ ես կամենում եմ շամպայն խմել և տօնել իմ քրոջ նշանազբութիւնը...

Պ. ԵՐԱՆ. (դեպի խոհանոց) Մտեփան շամպայն և բաժակներ, շտապիթ.

ՄԱԼԱՅ. (կողմ) Սատանան տանի, գաւառացին էլ գիտէ շամպայն խմել:

(Պ. Երանեան, Նունե եւ տ. Սուլբէգեան մի խումբ են կազմաւմ. Սուրեն մօտենում է մօրը եւ խօսում)

ՄԱԼԱՅ. (մօտենում է Արտեմին) Ի՞նչ պատահեց...

ԱՐՏԵՄ Մի փոքրիկ խօսակցութիւն.

ՄԱԼԱՅ. Պատմիր.

ԱՐՏԵՄ Այժմ տեղը չէ: Ցետոյ...

ՍՏԵՓԱՆ (շամպայն եւ բաժակներ և տառ դանիին)

ՍՈՒԼԲԷՆ Մայրիկ, հրաւիրիր.

Տ. ԵՐԱՆ. Պալոնայք - համեցէք մի մի բաժակ ..

ՄԱԼԱՅ. (անցնելով դանիին) Այդ իմ ճաշակի է և ես հասկանում եմ:

ՍՈՒԼԲԷՆ (տ. Սուլբէգեանին) Տ խնդրեմ: (Բոլորը անցնում են դանիին, բաժակները ձեռքերը վերցնելով, մի քանիսը մեջքը հասարակութեան դարձրած, Երեւում է դեմ առդ դիմ Սուրենը եւ Արտեմը կես դէմքով)

ՍՈՒԼԲԷՆ (բաժակը բարձրացրած) Պալոններ և տիկիններ խմում եմ այս բաժակը այն երջանկութեան համար, որ Երազում է իմ քոյքը: Ես ցանկանում եմ և մաղթում որ նրան երազները իրականանան և այդ իրականութիւնը լինի հաստատուն և յարատես: Ես ցանկանում եմ որ իմ քոյքը չսախպուի զղալ իր արած քայլի համար: Ճանկալի է ամենքիս որ այս ամուսնութիւնը լինի մերնորակազմ բարեկամութեան սերտ կապը և երբ և իցէ մեղանից մէկը կարմրելու տեղիք չանենայ միւսի առաջ-

ՄԱԼԱՅ. Ծուալօ, հիանալի.

ՍՈՒԼԲԷՆ Ճանկալի է պ. Սուլբէգեան, որ գուք, մոռանալով, կամ ճշշան ասած, թաղելով ձեր անցիալը, ինչպիսին էլ լինի դա, ամբողջ հոգով նուիրուէք ձեր ընտանիքին, որ է ձեր սեփական բարորութիւնը. խմենք նշանածների կենացը:

ՔՈՂՈՐԸ Կեցցեն նշանածները:

ՄԱԼԱՅ. (խմում է եւ կրկին լեցնում) Արտէմ Օլեքսանդրովիշ, օրինակերի ամուսին լինենու-

Տ. ՍՈՒԼԲԷՆ. Իմ հրձուանքին չափ չկայ: Պ. ԵՐԱՆ. (կնոջը) Ես ասում էի, հո-

գետիս, որ Սուրէնը բարի է,
ԱՐՏԷՄ Մի կրկու խօսք եմ կամենում
առել: ՄԱԼԱՅ. և ԵՐԱՆԵԱՆ Լսենք, լսենք:

ԱՐՏԷՄ Ես կարող եմ համարուել մինչև
անդամ ծերացած երիտասարդ, այնպէս որ իմ
խօսքը թող չը թուեն խօսքեր՝ որոնք կար-
տասանի մի քսանամեայ երիտասարդ իր կեան-
քի այս յեղաշրջման ժամանակ: Ես թէս ան-
ձանօթ օր. Նունէի հետ, սակայն այն միքանի
ժամը որ մենք գտնուել ենք միմեանց մօտ,
բաւական եղաւ իմ աշքի առաջ պարզելու
սրա հոգու անմեղութիւնը, ալնութիւնը և
պարզասրտութիւնը: Ես այժմ ես հանդիսաւոր
խօսառմ եմ տալիս, որ նա իր ապագայ
կեանքումն էլ կը մնայ նոյն անմեղը, ազնիւը
և պարզափրառ և երբէք ոչ մի գայթակեր-
ցուցիչ վարմունք չի ստիպիլ նըան զղջալ իլլ
արած քայլի համար: Խմում եմ այն ծնողների
կենացը, որոնք կարողացել են մի ծաղիկ
հասցնել այդքան անարատ և այդքան անբիծ:

ՄԱԼԱՅ. Ուռուա...

ԵՐԱՆԵԱՆՆԵՐ ԾՆՈՐՀԱԼՈՒԹԻՒՆ:

ՍՈՒԻՔՆ (սերմեյով նրա ձեռքը) Զեր ան-
կեղծ խօսքերը մի գրաւական են իմ քրոջ եր-
շանկութեան համար: (մօրը) Մայթիկ, շամ-
պայնի գետեր վազեցնե, ես այսօր կամենում
եմ հարբել, ինչպէս մի յետին գոեհիկ:

ՄԱԼԱՅԵԱՆ ԲՌԱՏԻ, այդ ես հասկանում եմ:

(Հարանգոյթ)

ԳՈՐԾՈՂՈՎԾԻՆ II

(Երտեմի առանձնառինեակը Սուլբէգեանների
տաճը: Խորքը պատուհան, որ նայում է դե-
պի պարտէզը, աչ III պլան դուռ, որ հա-
ղորդակցում է տան Երրին մասերի հետ-
ախ I պլան դուռ, Նունէի ննջարանը, աչ
I պլան պատուհան, մօտը գրասեղան վերան
յամպ. սիգարի տուփ, լրազիրներ եւ ալին:
Մէջտեղը ճօճարոս. Խորքում կուշետկա. I
եւ II գործողութեան մէջ մի տարի է անցել):

(Կողմնական պատերից մեկի վերայ ժամա-
ցոյց, զիշերուայ ծամը ինն է, մէջտեղը մի-
զիշերային յամպ, աղօտ լուսաւորում է սե-
նեակը. բէմը դատարկ է վարագոյրը բարձ-
րանալիս)

ՑԵՍԻՆ I

ՑՈՎԱԿԻ յետոյ ՆՈՒՆ:

ՑՈՎԱԿԻ (մտնում է. գրասեղանի վերայ
գտնուած յամպը վառում է վերցնում է մի-
սիգար, չորս կողմը նայում, վառում եւ
ծխելով գնում)

ՆՈՒՆ (զուրս է զայխ ննջարանից
տնային պարզ զգեստով, մի զիրք ձեռին.
մօտենում է աչ III դռան, ուղարկութեամբ-
ականց դնում եւ մօտենում գրասեղանին. նա-
մտածկուտ է եւ տիսուր) նա խաբեց ինձ. կըր-

կին խարեց. բայց այլևս այս այսպէս չի կառող և շպէտք է տեի. հարկաւոր է մի վերջ տալ... ես արդէն կորցրել եմ կեղծելու ընդունակութիւնս... (մտածելով) այն այն հարկաւոր է տեղեկացնել նրան ամբողջ խարէութեան հետ: (Վ. ճառական մօտենում է գրասեղանին, ջղալին վերցում է բռնդ զրիզ եւ կամենում է զրել, յանկարծ կանգ է առնում): Ի՞նչ զրեմ. ինչպէս զրեմ նրան, որ ես վաղուց արդէն հիասթափուել եմ, որ ես լքուած եմ ու խարուած. Տէ՛ր Աստուած և նա խարում է ոչ միայն ինձ, այլ նաև իր մօքը, այն մաքուր և անկեղծ հողու տէք կնոջը, որ հաւատացած է թէ իր որդին երջանիկ է ինձանով և ես նրանով... ինչպէս քայլայեմ նրա յոյսերը, նրա որին ես սիրում եմ և յարգում ինչպէս իմ հարազատ մօրը... սակայն այս չի կարող այլ ես երկարել... և ժամանակն հասել է դիմելու իմ եղբօր խորհրդին (սկսում է զրել)

ՏԵՍԻԼ 2

ՆՈՒՅԻ ԵԿ Մ. ՍՈՒԼԵՒԳԵԱՅ

8. ՍՈՒԼԵՒԳ. (մտենում է աջ III դռնից Եւ տեսնելով նույնին, քաղցր) Ի՞նչ ես մնում այստեղ աղջիկս:

ՆՈՒՅԻ (արագ պահելով բռնդը) Կարդում եմ մայրիկ:

8. ՍՈՒԼԵՒԳ. Արտէմը տանը չէ...
ՆՈՒՅԻ նա... նա խկոյն կը գայ...

8. ՍՈՒԼԵՒԳ. մօտենում է եւ զոյելով նրա զրուխս) իմ թանգագին զաւակս, և գում մենակ չես ձանձրանում:

ՆՈՒՅԻ (ճիգ գործ դնելով) Ես մենակ... բայց ես շատ քիչ եմ մենակ մնում մայրիկ:

8. ՍՈՒԼԵՒԳ. Ես գիտեմ, գիտեմ աղջիկս, որ Արտէմը քեզ սիրում է: և ինչպէս կարելի է չսիրել քեզ նման մի հրեշտակի, իմ սիրելի զաւակս. դու մեր տան զարդն ես, երջանկաբեր թուչնակլ և Արտէմի բախտաւորութիւնը... այն, այն, նա շատ անգամ է ասել ինձ... իսկ դու, նոյնպէս սիրում ես Արտէմին այն.

ՆՈՒՅԻ (զրուխս կախ է զցում, կամենալով ծածկել յուզմունքը):

8. ՍՈՒԼԵՒԳ. Ի՞նչ է, ամաշում ես ինձանից... ես շատ լաւ գիտեմ, շատ լաւ եմ նկատում, որ դու ևս նրան ես սիրում: Գիտես նա բարի, նա շափազանց բարի է: Դու նոյնպէս չես գտնում որ նա բարի է:

ՆՈՒՅԻ (արագ ես անհանգիստ) այն այն: (վեր է կենում)

8. ՍՈՒԼԵՒԳ. Իսկ ուր է գնացել նա...
ՆՈՒՅԻ ես... ես չգիտեմ,

8. ՍՈՒԼԵՒԳ. Ինչպէս... չգիտես... նա քեզ չէ ասել այդ:

ՆՈՒՅԻ Ո՛չ... չէ ասել... (արագ ուղղելով) այսինքն ես չեմ հարցրել... (նա շուտով կը գայ...) դու անհանգիստ մի լինիը մայրիկ:

8. ՍՈՒԼԵՒԳ. Ես շատ հանգիստ եմ զաւակս, շափազանց հանգիստ, ես այժմ կարող

և հանդարս և առանց մատառանջութեան թրդինել այս պշխարհը...

ՆՈՒՆԵ (արտառուելու, մօտ) Մայրիկ այդպէս մի խօսիր, ես լաց կը լինեմ...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ինչու լաց լինել իմ անուշիկ գաւակս..., գու ունիս մի ամուսին ու քեզ սիրում է, նա քեզ համար կը փոխարինէ իմ տեղն էլ, իսկ ես, էհ, իմ օրերը համարուած են, ես այլս ոչինչ չունեմ այս աշխարհից սպասելիք, բացի մի սիրուն ու կայտառ թռանիկցի...

ՆՈՒՆԵ (հեծկլուալով) Մայրիկ, լսեց մայրիկ...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (զարմացած, յետոյ առանձին լարնափով) Նունէ, Նունէ, ինչ պատահեց քեզ աղջիկս: ՆՈՒՆԵ (շարունակամ և աւելի ուժգին հեծկլուալ)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (կորցրած ինքնիրան) Նունէ, աղջիկս..., ոչ, գա ինձանից շուտով բաժանուելու վիշտը չէ, ո՞ս դժբախտութեան արտասուրներ են... մի գուցէ դու դժբախտ ես:

ՆՈՒՆԵ (արագ հեծկլուանքի միջից) Ո՛չ, ոչ, (կառենում և զայել բայց զի կարողանում):

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (մօտեցնում է նրան կողաշեսկային) Նոտիզ այստեղ... ոչ ոչ դու ինձ խարել չես կարող... գու պէտք է ինձ բոլորը ասես, պատմիր աղջիկս, սրտաբաց եղիր...

ՆՈՒՆԵ ես... ես չեմ կարող...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ի՞նչ... չեմ կարող... սպասից... Տէր Աստուած ես կը խելազարեմ եթէ այդ այդպէս լինիս, ասու նա քեզ չի սիրում...

ՆՈՒՆԵ (բացառական կերպով զլուխը շարժում է վիտով) Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ո՞չ... ոչ մշտակարեցի է. նա ինձ երկուում է,—ինձ հաւատացնուում է որ նա քեզանով է միայն երջանիկ. մի գուցէ դու սիւլուում ես աղջիկս...

ՆՈՒՆԵ (վլուալ) Օ՛ մայրիկ!

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Գիշերնելը ուշ է վերադառնում տուն:

ՆՈՒՆԵ (դժուարութեամբ) Երրիմն... չի էլ վերադառնում երբէք:

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (կտրատուած) Երբ.., երբէք ՆՈՒՆԵ (զլուխը խոնարինում է)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Եւ գա յաճախ է պատահում: ՆՈՒՆԵ Զարաթը մի քանի անզամ...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (սարսափով) Բայց գա զարհուրելի է (կտրատուած ձայնով) դա... դա...

ՆՈՒՆԵ (վախսեցած) մայրիկ ի սէր Աստուծոյ...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (սիրուց բռնելով) Ոչինչ, ոչինչ, ես հանգիստ եմ... ես չեմ յուզուում բայց դու խեղճ աղջիկս դու այդ բոլորը տանում ես անտառանջ... ոչ, ես քեզ ասում եմ որ այդպէս չի կարող շարունակուել. ես պէտք է խօսեմ նրա հետ...

ՆՈՒՆԵ Ո՛չ, ոչ ի սէր Աստուծոյ.

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ինչու... ինչից ես վախս-

Նում. միթէ ևս իրաւունք չունեմ իմ որդուն
յանդիմանելու...

ՆՈՒՆԵ Բայց դա... դա կը գրգռի նրա
ատելութիւնը...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Նա սպառնացիլ է քեզ...

ՆՈՒՆԵ Այն... ախ ևս վախենում եմ...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Բայց դա դժոխային կեանք
է, խեղճ աղջիկս:

(Դրսից ելեկտրական գանգի ձայն երկու
անգամ)

ՆՈՒՆԵ (վախեցած) Տէր Աստուած.

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Ի՞նչ պատահեց.

ՆՈՒՆԵ Այդ նա է:

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Նա... զնա սենեակդ...

ՆՈՒՆԵ Մայրիկ աղաչում եմ քեզ...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Գնա, գնա. այս խօսակցու-
թինից է կախուած քո երջանկութիւնը...

ՆՈՒՆԵ (աղաջական հայացք և նետում)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Հանգիստ եղիք դաւակս:

ՆՈՒՆԵ (գնում է)

ՏԵՍԻԼ 3

Տ. Սուլբեկեան. Արտեմ.

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (ձեռքերը տրորելով ման և
գալիս ծանր ծանր)

ԱՐՏԵՄ (մտնում է արագ եւ կանգ առ-
նում, իր մօրը տեսնելով կանգնած իր դիմաց)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (խիստ) Ո՞րտեղ էիր:

ԱՐՏԵՄ Մայր.

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (առելի ուժգին) Ո՞րտեղ էիր:
ԱՐՏԵՄ (զփարուած եւ արագ) մի գըժ-
րախտութիւն... ընկերներիցս մինը ծանր...
հիւանդ էր և ևս պարտականութիւն համա-
րեցի...

Տ. ՍՈՒԼԲԵԿ. (ընդմիջելով) Դու ստում ես.
ԱՐՏԵՄ (նայում է նրան ապշած)

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Դու սուտ ես խօսում և այն
էլ զզուելի կերպով... Ահա թէ ի՞նչ, ահա թէ
ի՞նչպէս ի չարն ես գործ զնում իմ վստահու-
թիւնը... ամբողջ 35 տարուայ ազատութիւնդ,
սանձարձակ կեանքդ չբաւականացան քեզ յա-
գուրդ տալու համար, զու առանց խորհիւու,
իբրև մի անառակ և զեղիս պատանի ես վար-
ում և քայլայում ես մի անմեղ երեխայի
կեանքը... մի երեխայի որ ամուսնութիւնը
պատկերացրել էր վարդադոյն, ժամուն, որ
վստահանալով քո վերայ, յանձնել է իր բախ-
ուը քո ձեռքը: Կեցցե՞ս. գեղեցիկ կերպով ար-
դարացրիր իմ և նրա յոյսերը...

ԱՐՏԵՄ (ըմբուտ) Եւ նա է պատմել քեզ
այդ բոլորը:

Տ. ՍՈՒԼԲԵԿ. Նա... անմեղ երեխան հե-
րոսութիւն է ունեցել մինչև այժմ թագցնել
ինձանից իր վիշտը... նա մինչև անգամ աշխա-
տել է երջանիկ ձեանալ, ինձ և մանաւանդ
քեզ չվշտացնելու համար... նա իր երեխայ
բնութեամբը կարծել է թէ իր այդ վարմուն-
քով կարող է քո խիղճը շարժել և վերադա-
նել իր կորցրած երջանկութիւնը..., և միթէ
մարել է քո խիղճը... միթէ մարել է իմ որ-

գու խիդճը... նրան՝ որին եռ կարծել եմ թէ
կըթել եմ բարի, համեստ և առաքինի... ասա,
ինչ ես մտադիր անել...

ԱՐՑԵՄ Մայր, դու յուղուած ես և բար-
կացած, ես այդպիսի դէպրերում աւելի լու-
եմ համարում լոել... զնա հանգստացիր աղա-
շում եմ քեզ. գու կարիք չունէիր անհանգիստ
լինել մի անհաւկացող երեխայի տրաունջնե-
րից. գու ինձ այնքան յաւ ճանաշում էիր, ու
ես երբէք չէի յաւալ որ որիէ բան կը խախ-
տել որ դէպի ինձ ունեցած վստահութիւնը...

Տ. ՍՈՒԼԲԷԿԻ. (յօւսոյ նշանակ) Միթէ
ճշմարտութիւն չէ... ասա զաւակս, չափազանց
ծանը կը լինի ինձ համար տեսնել քայլքայումը
այն ամուսնութեան, որը ես եմ կազմել...
ասա, հանգստացուր քո մօր սիրտը. ես չեմ
կարող տանել մի այդպիսի վիշտ:

ԱՐՑԵՄ Մայր հանգստացիր, դրանք երե-
խայական ցնորքներ են. եթէ ես երբեմն բա-
ցակայում եմ տանից, դա գեռ ապացոյց չէ
որ ես դաւաճանում եմ. կայ արդեօք որ և է
չօշափելի ապացոյց իմ անհաւատարմութեան.
ես չեմ կարող միանգամից խղել իմ տարինե-
րի ընթացքում ձեռք բերած ծանօթութիւն-
ները. իմ ունեցած սիրտ կապերը. ես չեմ կա-
րող հեռանալ իմ ընկերական շրջանից, դու և
կինս կամենում էք ինձ ծաղրի առարկմայ դարձ-
նել. շատ հաճելի է եթէ ծիծաղեն իմ քթին
և ասեն որ մի քառասնամեայ մարդ, իր կէս
տարիքը չունեցող մի կնոջ քմահաճոյքիների
ստրուկն է դառնում, թէկուղ այդ կինը լինի

իմ ամուսինը... ես կարծում եմ մայր, որ իմ
ըմբռնողութիւնը տեղն է և եռ շտա լաւ գի-
տում թէ լինչ է կեանքը, լինչ է կինը և ինչ է
շրջանը... ամուսնանալ. այդ չի նշանակում մի
կողմ շպրտել ընկերներին և բարեկամներին...
աւելի խելացիութիւն կը լինի նրան հասկաց-
նել այդ բոլորը, քան թէ յանդիմանել ինձ
իրու մի դպրոցական երեխայի...

Տ. ՍՈՒԼԲԷԿԻ. Ես խկոյն կը կանչեմ նրան..

ԱՐՑԵՄ ՈՇ, ան, կարիք չկայ. ես ինքս կը
խօսիմ, կը հասկացնեմ նրա ցնորքների ան
հեղեղութիւնը և վստահ եղել, որ այլ ես չի
կրկնուի այդ անբաւականութիւնը:

Տ. ՍՈՒԼԲԷԿԻ. (յօւզուած) Արտէմ, սիրելի
զաւակս, ես միշտ հաւատացած էի, որ դու ի
չար չես գործ գնի իմ վստահութիւնը. այն,
ես արժանի չեմ այդպիսի մի խիստ պատճի:

ԱՐՑԵՄ (գորտվայի համբուրելով նրա
ձեռքը) Մայրիկ, իմ քաղցրիկ մայրիկ, գնա
քնիկ, հանգստացիր:

Տ. ՍՈՒԼԲԷԿԻ. Դու նրան հանգստացուր
մի քան իմացած կաց, որ նա նոյն տեսակ
վստահութիւն չի տածում դէպի քեղ ինչ որ
ես... հաւատացնը նրան, որ դրանք սխալ են,
միմիայն սխալ... թիւրիմացութիւն:

ԱՐՑԵՄ (արագ են անհանգիստ) Այն այն,
(մեղմ դէպի դուռն և լուսմ)

Տ. ՍՈՒԼԲԷԿԻ. Տէր Աստուած, Տէր Աս-
տուած, ոքան յուղումներ մի օրուայ մէջ...
հանգիստ քնիկ զաւակս, հանգիստ քնեցէք...
(գնում ե)

ՏԵՍԻԼ 4

Արտեմ յետոյ նունի.

ԱՐՑԵՄ (Ետևից ցրուած մտքամ) ԽԵՂՋ մայր. (մաս է զալիս արագ-արագ, յետոյ քիչ քիչ ծանրացնում է եւ զալիս նստում զրասեղանի մօտ զլախը ճեռների մէջ առանելով...) պատուա—պատի ժամացոյցը խփում է տասը. արագ վերկենալով) ժամը 10-ը. ես անպայման պէտք է Պանհայի մօտ լինեմ... (մի քանի քայլ է անում եւ կանգնում) բայց մայրս կառող է իմանալ, մինչ ես խօսք տուի նրան տանը մնալ... Տէր Աստուած, ինչպիսի անտանելի շղթայ է... բայց ամօթ արեք է ինձ համար ինչ որ երեխայի քմահաճուքին ենթարկուել. ծիծաղելի է...

ՆՈՒՆԵ (Գուրս զայով սենեակից կանգնում է դրանց զլախը քաշ զցած):

ԱՐՑԵՄ (անսովոր կոպտուրեամբ) Ի՞նչ ես կամենում,

ՆՈՒՆԵ Ե՞ս... ոչինչ... ես կամեցայ իմանալ թէ մայրիկը ինչ դրութեան հեռացաւ այստեղից նա շատ յուղուած էր...

ԱՐՑԵՄ (նոյն տոնով) Յուղուած. . այս յարգելի տիկին, երբ դու ամին չանք չես խնայում տան խաղաղութիւնը թունաւորելու համար, երբ դու ցանկանում ես իմ և իմ մօր մէջ մի պատուար կանգնել, շատ հասկանալի կը լինի որ նա յուղուի և յուսահատութեան մատնուի:

ՆՈՒՆԵ (մեղմ) Բայց դու շատ լաւ զիտես որ ես այդպիսին չեմ, դու ինձ լաւ ես ճանաշում և գիտես որ ես անընդունակ ևմ այդպիսի մի քայլ անելու. Արտէմ, հոգեակս, չէ որ դու բարի ես. (մօտենում է) դու շատ լաւ ես հասկանում թէ ինչ զբութեան ևմ համնում. երբ մենակ ևմ մնում. Ամումնութեանս օրից ես ապլել ևմ քեզանում իմ միակ ընկերը և պաշտպանը, սիրել, յարգել ևմ քեզ. իսկ դու, միթէ արդէն չես սիրում ինձ:

ԱՐՑԵՄ (Կոպիտ) Հանգիստ թող ինձ իննդրեմ, ես ձանձրացել ևմ այդ անսակ դարձուածքներից, դու երեխայ ես և չես հասկանում կեամփը:

ՆՈՒՆԵ (զառնուրեամբ) Երեխայ, կեանքի հասկացողութիւն. զեղեցիկ զէնք է, այնպէս չէ. շատ լաւ. ես կեանքը հասկանում ևմ իմ տեսակէտով և քո անտանելի վարմունքը, քո վարած կեանքը իմ մէջ կասկածներ է ծնկցնում: Ի՞նչ կեանք է այն կնոջ կեանքը, որի ամուսինը, նա որ իր պաշտպանն է ու ամբողջ կեանքի ընկերը, երեսի վրայ է ձգում իրան և ժամանակի մէծ մասը անց է կացնում ընտանիքից հեռու, ով գիտէ ուր: Ի՞նչ տեսակ էք հասկանում դուք կեանքը, դուք ինտելիգէնսներդ և արիստօկրատներդ, դուք որ ծանօթ էք կեանքի բոլոր վայելցներին և լաւ ապրելու հղակակին. բացարի, որն է այդ անընդանելի կեանքը, որը անմատչելի է իմ երեխայ մտքին:

ԱՐՑԷՄ Այս՝ որ մերն է: Ասենք դու այդ
հասկանալ չէս կարող, որովհետև քո դաստիա-
րակոթիւնը այլ է սովորեցրել քեզ և զարժա-
նալի էլ չէ որ մի մայր, ինչպիսին քոնն է,
քեզ մեծացրած լինի փթած և հնացած գա-
ղափարներով:

ՆՈՒՆԵ Արտէմ Ալէքսանդրովիչ, մի ա-
նարդիր իմ մօրը, յիշիր որ դու ես ունես մի
մայր, որին ես յարգում եմ և սիրում. և գէլ
այդ յարգանքը արդեւք լինի քեզ անարգանք
շպրուել մօրս հասցէին...

ԱՐՑԷՄ (գրգռաւած) Ես խօսում եմ քո
գաւառական սահմանափակ դաստիարակու-
թեան մասին...

ՆՈՒՆԵ (յուզմանքով) Բաւական է խընդ-
րեմ: Դու կարծում ես որ գաւառական դաս-
տիարակութիւնը շի կարսղ տալ այնքան հաս-
կացողութիւն, ըմբռնելու կեանքի վատ և ա-
րատաւոր կողմերը, դու կարծում ես որ մեր
դաստիարակութեամբ մեծացած մի կին պար-
տաւոր է միշտ լսել և համբերատարութեամբ
տանել, ամեն մի վարմունք: Ո՞չ Արտէմ Ալէք-
սանդրիչ, եթէ դու այնքան ազնիւ չգտնուե-
ցիր որ պահէիր քո խօսուումը, այն՝ որ տէիր
մեր տանը, ամենիս ներկայութեամբ այնքան
զգացուած և անկեղծ, եթէ դու ոչնչից շակ-
նածելով ոտնակոս աշիր այն, այդ դէպքում
ես ինձ թոյլ կը տամ վարուել իմ հասկացո-
ղութեամբ:

ԱՐՑԷՄ Այնուամենայնիւ դու կին ես.
նախ իննդրել, ապա սպառնալ, վերջը լալ...

համ համ երեխուայ... ես ի հարկէ այնքան
յիմար չեմ լինի, որ քո սպառնալիքներից վա-
խենամ և այնքան երեխուայ չեմ լինի, որ քո
սովոծի ոլիս ապրեմ: Միայն իմացած կաց, որ
եթէ դու հանգիստ շես թողնիլ մայրիկին, ես
պատասխանատու չեմ լինի իմ վազմուերի
համար:

ՆՈՒՆԵ (վրայովուած) Ես մայրիկի հան-
գիստը չեմ խոսի և դա՛ռշ թէ քո երկիւղից,
այլ նրան խնայելով. երանի կը լինէք եթէ
ինձ շափ դու էլ մատածիր նրա մասին:

ԱՐՑԷՄ Դու ցնորուել ես, աւելի լու-
կանես եթէ գնաս հանգիստ քննես; Անձանա-
լով այդ յիմարութիւնները, ես պէտք է գնամ.
մի կարեւոր ընկերական համախմբում, որից
բացակայելը անկարելի է: Ես խօսը եմ տուել
և զրժել խօսքս, անկարելի է ինձ համար:

ՆՈՒՆԵ (հաստատ) Դու չես գնալ.
ԱՐՑԷՄ Ի՞նչ.

ՆՈՒՆԵ Այն, այդ ես եմ ասում, դու ուղ-
ղակի խօսյ ես տալիս տանից, ինձանից քո
մօրից... ինձ լսու ծանօթ են այդ մշտական
համախմբումները, որոնք ոչ այլ ինչ են ծա-
ռայում, եթէ ոչ զւարճանալու գեղիսութեամբ
և հարբեցութեամբ: Յայց այդ շի լինի...

ԱՐՑԷՄ Եւ դու ես արդեկելու:

ՆՈՒՆԵ Այն ես, ես կը զուսամ կարթնաց-
նեմ ամբողջ տունը, քո մօրը և կասիմ «ահա
այն ստախօս որդին» որին դու հաւատում
ես, ահա այն խարեւայ ամուսինը, որին դու
հաւատարմութեան ափալը ես համարում» այն,

ես այսուհետև ոչնչի առաջ կանգ չեմ առնի...
ԱՐՏԵՄ (գրգոռուած) Լոիր.

ՆՈՒՆԵ Ո՛չ, չեմ լոիր. ես պահանջում եմ
որ դու տէք լինես քո խոստամանը. ես չես թոյլ
տայ որ շպրտեն ինձ, և խլեն ինձանից իմ
երջանկութիւնը:

ԱՐՏԵՄ (կատաղած բռնում է ձեռքից եւ
շպոտում) եսկ եթէ դու կըվրդովիս իմ մօր
հանգիստը և չես լոիր ես կը գլուհնամ քեզ
լոեցնելու կերպը...

ՆՈՒՆԵ (ծնկազոր) Խփիր, ծեծիր, միայն
մի դնուշ մի թոյլ տայ քեզ այդ քայլը անելը,
աղաչում եմ քեզ ի սէր քո մօրը...

ԱՐՏԵՄ Դու ինձ զգուեցնում ես...

ՆՈՒՆԵ (արագ վէր է կենում սպառ-
նալի) Ճատ լւա զնա, զնա..

ԱՐՏԵՄ (մի վայրկեան նայում է նրան
եւ արագ դուրս է զնում):

ՏԵՍԻԼ 5

Կունիկ յետոյ Յովսեփ

ՆՈՒՆԵ (մի վայրկեան սառած նայում
է եւ յետոյ յանկարծ նեմկուում,) Տէր Աս-
տուած... Տէր Աստուած... (մօտենում է զբո-
նքին) զնաց... չի դառնայ... մայրը նոյն իսկ
չկարողացաւ նրան պահել... (սպառնա) Ուրե-
մըն ինչ... ինչ կապակցութիւններ ունի, որ չի
կարող իսկու նոյն իսկ իր մօրը համար, որին
պաշտում է... գուցէ մի սիրուհի... ահ... պէտք
է վերադարձնել նրան գէթ իր մօր համար...
(մօտենում է գրասեղանին, արագ, արագ,

գրում, նայում է զուրշը, դնում է ծրարի
մեջ եւ զանգ է տալիս).

ՅՈՎԵՄ (մտնում են կանգնում դրան մօտ)

ՆՈՒՆԵ Ուշադրութեամբ լոիր ինչ որ տ-
սում եմ. այս նամակը անյապաղ կը հասցնես
եղբօրս, բայց այնպէս, որ մայրիկը չիմանայ.
Նա քննած է:

ՅՈՎԵՄ Ո՛չ տիկին.

ՆՈՒՆԵ Ուրեմն զգոյշ. (փող է տալիս)
կառը վերցրու գնա.

ՅՈՎԵՄ (առնում է նամակը, գլուխ է
տալիս եւ զնում)

ՆՈՒՆԵ (անհանգիստ, մաս է զայխ մօ-
տենում է խորրի պատուհանին եւ զդային
շարժումով բաց է անում ու յենուում կես
դեմքը տեսանելի հասարակութիւնից) Ի՞նչ է
սպասում ինձ ապագայում մի այսպիսի ամուս-
նու հետ... եթէ այժմ իր մօր կենդանութեան
ժամանակ, նա չի խնայում ինձ, ինչ կըլինի
իմ վիճակը նրա մահուանից յետոյ... (սար-
ուում է եւ նեռանում պատուհանից, խորհր-
դածելով առաջ է զայխ) Միայնակ մնալ մի
տառումնու հետ, որի աշքում ես այլս ոչ այլ
ինչ եմ, եթէ ոչ մի իր, մի կարասիք... անց-
կացնել մի ամբողջ կեանք լուռ, միայնակու-
թեան մէջ և շարունակ ստորանալ, ստորա-
նալ, մինչ յերի հետ հաւասարուելը... ահ...
կը կարողանայ արգեօք եղբայրս ուշըի բերել
նրան, յիշեցնել նրան իր պարտականութիւն-
ները... և եթէ շյաջաղուի նրան այդ, եթէ ա-
մուինս ըմբոստութեամբ ծաղրէ նրան, ինչպէս

ինձ է ծաղրում, ի՞նչ կըպատահի այն ժամանակ, գուցէ կրիւ, որ ծայրահեղութեան հասնելով նրանցից մէկի համար աղէտաբեր կարող է ինել և կամ բաժանմ' և... լսդ՛ւմ... (նատուած և գրաւեղամի մօռ) կրկին վերագառնալ այնտեղ, որ ապլել եմ ես ամբողջ տասնեվեց տարի, վերադառնալ և տանել ինձ հետ ծննդացս յայսերի քայլայումը... և ի՞նչ տեսակ է ընդունելու նա իր աղջկան, որին յոյս ունէր այս շրջանի իրրել թագուհին տեսնել, միշտեւ նա թողել է իր ամուսնուն և դա միմիայն վերջինի զաւաճանութեան պատճառաւ: (վեր կենալով) Այն, ես ամբողջ հոգով հաւատացած եմ որ նա մի խաբեքայ է և դաւաճան, նա ի չարն է զործ զնում մի կնոջ հաւատաբմութիւնը և մի մօր վստահութիւնը և եթէ հարկ լինի, ես հրապարակաւ կը գոռամ նրա երեսին, որ նա վատ է, սառը է... (պառագա) Ի՞նչ խարսուիլ է կեանքը. Ի՞նչ վարդապոյն է երեսում մեզ անյայտ և խորհրդաւոր ապագան և որքան դառն է իրականութիւնը... որպիսի՛ հիասթափութիւն... յանձնուել մէկին. որին չես ճանաշում, որը լինելու է քո տէքը, քո կեանքի դեկավարը և վայ եթէ բաղզը քո հանդէպ բերէ մի Սուլբէգեան փայլուն արտաքինով և փշացած ներքինով... Ո՛չ, պէտք է վերջ տալ, բաժանուել, թէկուզ իմ այդ քայլով հրաւիրեմ իմ վրայ հասարակաց մեղաղբանքը և ծնողներիս կշատամբանքը: (նայում և զորս կողմը, մօսենում և մուտքի դռանը) ո՞չ ո՞ք... մայրիկը քնած է, ապահով

և հանդիսա, վստահ իր որդու վրայ... (սարսափու) եթէ, եթէ նա այժմ շօշափելի ապացոյցներով տեսնէ իր որդու ստորութիւնը և զդայ ամբողջ կեղծիքը... Ի՞նչ կը լինի այն ժամանակ. . (աւելի ուժեղ) ինչ կըլինի այն ժամանակ. Աստուած իմ, Աստուած, տուր նրան ոյժ, տանելու այդ ծանր հարուածը:

ՏԵՍԻԼ 6

Նունի, Յովակի յետոյ Սուրբն.

ՅՈՎԱԿԻՓ (մտնելով) Տիրուհի, ձեր եղբայրը:

ՆՈՒՆԻ (քերեւ անհանգստութեամբ) թող ներս գայ:

ՅՈՎԱԿԻՓ (գնում և) ՆՈՒՆԻ (Ըշխատում և հանգիստ երեալ) ՍՈՒՐԵՆ (Արագ մտնում և մուտքի դրուից և մօսենում) Ուրեմն ճշմարիտ է:

ՆՈՒՆԻ Այն. ՍՈՒՐԵՆ Աղքան ժամանակ է այդ. ՆՈՒՆԻ Մօտ երեք ամիս: ՍՈՒՐԵՆ (յանդիմանական) եւ զու ինձ ոչինչ չէիր ասում:

ՆՈՒՆԻ Չէի համարձակում.., ՍՈՒՐԵՆ (խստ) ինչն, մի գուցէ մեղքանում էիր նրան:

ՆՈՒՆԻ Ո՛չ, այլ չէի կամենում անհանգստութիւն պատճառել քեզ. ես կարծում էի որ նա կը փոխուի:

ՍՈՒՐԵՆ ինչպէս տեսնում ես, զու սխալ-

ուել ես և այդ քո սխալը աղէտալի հետևանք-ներ է ունեցել:

ՆՈՒՆԵԼ ԻՆՉԵՐ ես խօսում:

ՍՈՒՐԵՆ Այն քոյքիկ, նա ընկել է իւր նախկին կեանքի մէջ և նրան յետ կեցնելը դժուար է այժմ... եթէ գու այդ անտեղի զգուշութիւնները շփործ դնէիր, այն ժամանակ հեշտ կըլինէր արգելել նրան հէնց առաջին բայլում: Խսկ այժմ...

ՆՈՒՆԵԼ ՄՌՈՒԷ անկարելի է:

ՍՈՒՐԵՆ Այժմ երկուսից մէկն է լինելու. կամ ես կստպիմ նրան ճանաչելու իր պարտք և կամ...

ՆՈՒՆԵԼ Ի՞նչ...

ՍՈՒՐԵՆ Այդ մնայ: (Յստեցնելով նրան գրասեղանի մօտ, ինքն էլ և Յստում. ճայի-լավ նրա աջքերին) Դու պատմիր ինձ ամբողջ իրողութիւնը և մանաւանդ առանց ծածկամտութեան քոյքիկս...

ՆՈՒՆԵԼ Ի՞նչ բան:

ՍՈՒՐԵՆ Ազդեօք նկատում ես որ օրեցօր գունատում ես..

ՆՈՒՆԵԼ Այս.

ՍՈՒՐԵՆ Ի՞նչ է պատճառը:

ՆՈՒՆԵԼ Ես շատ գիշերներ եմ անքուն անցկացնում:

ՍՈՒՐԵՆ Ինչու.

ՆՈՒՆԵԼ Ես սպասում եմ նրա վերադարձին...

ՍՈՒՐԵՆ (անհանգիստ) Նտ ուշ է վերադարձում:

ՆՈՒՆԵԼ Ոչ վաղ, քան առաւտեան ժամը 5-ը...

ՍՈՒՐԵՆ Հայրբած:

ՆՈՒՆԵԼ Երբեմն նոյն խսկ ոտի վրայ կանգնելու անկարող գրութեամբ...

ՍՈՒՐԵՆ Եւ քեզ արթուն գտնելիս, նա չի զգում որ և է զիզչ, որ և է ամօթ...

ՆՈՒՆԵԼ Նա այդպիսի բռպէներումն է որ միայն զգում, փայփայում է ինձ և իր «փոքրիկ տիկնիկն» է անուանում:

ՍՈՒՐԵՆ Դա զարհուրելի է:

ՆՈՒՆԵԼ (զուսկն և խոնարհեցնում)

ՍՈՒՐԵՆ Խսկ լուրջ ժամանակ:

ՆՈՒՆԵԼ Նա նոյն խսկ հետո էլ չի խօսում և խօսելիս էլ կտրուկ և չոր պատասխաններ է տալիս իմ տուած հարցերին...

ՍՈՒՐԵՆ Բայց նա քայքայել է քո կեանքը իմ խեղճ քոյքիկս... լսիր, բժշկի դիմել ես: ՆՈՒՆԵԼ Ինչու դիմեմ:

ՍՈՒՐԵՆ (անհանգիստ) Այն, այն, այնքան էլ անհրաժեշտ չէ, սակայն լաւ կանես եթէ դիմես բժշկի... քո կազմուածքը թոյլ է և կարող ես շատ շուտ հիւանդանալ... նա երբ գնաց տանից.

ՆՈՒՆԵԼ Մի ժամ շկայ

ՍՈՒՐԵՆ Մի ժամ շկայ... զիսես ինչ քոյքիկս, այդպիսի ամուսինների համար տանձուելու և անքուն մնալու կարիք չկայ, դու տեկի լաւ կանէիր, եթէ հէնց սկզբից շխանգարէիր քո հանգիստը և իդուր տեղը յուղումներ չկըէիր: Նրանք չարժեն այդ յուղումնե-

րին, նրանք անարժան են այն տսակմանի, որ
ևքէք շպէքը է գիտակից լինեն որ իբանց
համար տանջւում է մի կին և այն էլ քեզ
նման մի հրեշտակային կին, այդ բանով կը
հպարտանան նրանք և մի կնոջ տանջանքի
մէջ լկախօբէն նրանք բաւականութիւն են ո-
րծնում... իսկ այդ գտականութիւնը նրանց
շտալու համար, գու տյժմ վեր կը կենաս և
կը քննես: (վեր կենայով) իսկ ես գնում եմ...

ՆՈՒԽԵ նոյնպէս վեր կենալով) Ա՞ւր.

ՍՈՒՐԵՆ Վերագարձնելու նրան:

ՆՈՒԽԵ (արագ) Աւրեմն զու գիտես թէ
որտեղ է նա:

ՍՈՒՐԵՆ (խորս տարով պատասխանելուց
ես կը գտնեմ նրան... զու հանգիստ քնիք, ես
խօսք եմ տալիս որ կը վերագարձնեմ նրան:

ՆՈՒԽԵ Լսիք Սուրչն, զու խօսում ես ինձ
հետ այն լեզուով, ինչ որ մի տարի առաջ...
զու ծածկում ես ինձանից այն՝ ինչ որ ես
շատ լաւ գիտեմ. ինձ ծանօթ է իմ ամուսնու
բոլոր վատ կողմերը, նրա բոլոր մոլի հակում-
ները և երբ յիշում եմ թէ ինչ էլ նա առա-
ջն անդամ մեր տանը եղած ժամանակ, ինչ
տեսակ էր խօսում, երբ մտածում եմ թէ
մարդիկ որքան ընդունակ են կեղծելու, բարի և
համեստ ձեանալու, ինչ որ իսկապէս չեն, ես
գալիս եմ այն եղբակացութեան, որ աշխարհը
խարէութեամբ է կառավարում: Իմ մի տարւայ
փորձառութիւնը ինձ շատ բան սովորացրեց և
մանաւանդ կեղծելու արհեստը, ես ստիպուած
եմ ծածկել իմ վիշտը ամենքից և մանաւանդ

նրա մօրից, որովհետև ես նրան սիրում եմ և
խղճում, և նա, ամուսինս, իմ այդ սէրը գէպի
իր մայրը շահագործում է, վստահ լինելով որ
ես լուս կը մնամ: Այն միակ գաղափարը, որ
իւր մայրը կարող էր երբ և իցէ տեղեկանալ
իրողութիւնը, շատ անգամ կասեցնում էր
նրան. սակայն նա այժմ այդ էլ ի նկատի չու-
նի. նա ընկել է ճահճի մէջ և ոչ մի սուրբ
զգացմունք, ոչ մի ազնիւ պարտականութիւն
դէպի ծնողը և ամուսինը այլ ևս գոյաւթիւն
չունեն նրա մէջ և նա գէպի անկումն է յա-
ռաջանում գահավէժ քայլերով: Դու ինձ կա-
մենում ես այստեղ թողնել, յորդորելով որ ես
հանգիստ մնամ և նոյն խոկ քննեմ... քննեմ...
Էհ եղբայրս, իմ քունն ու հանգիստը վերջնա-
կանապէս կորել են և եթէ արհամարանից
իսկ գրլուած, կամենամ մոռացութեան տալ
այն ամեն վշաերը, որ ես կըել եմ այս մի
տարուայ ընթացքում, ես կըկին չեմ կարողա-
նալու հանգիստ վայելել և բացի այդ եթէ մի
մոլորեցնող գոյութիւն ունի իսկապէս, եթէ
կայ մի սիրուհի, ես կամենում եմ տեսնել
նրան սեփական աշքերով, ճանաչել նրան, ես
պատրաստ եմ նոյն իսկ խնդրել նրան, որ նա
վերագարձնի իմ ամուսնուն և զա մանաւանդ
նրա մօր համար:

ՍՈՒՐԵՆ Ո՛չ, այդ չի լինի... ես երբէք թոյլ
չեմ տայ քեզ մտնել այդ որջը, այս, քոյրիկ
ես ճանաչում եմ նրա սիրուհուն, բայց ես
կամենում եմ որ զու մնաս ահծ անօթ և ահ-
տեղեալ այդ մարդկանց վատ շրջանի հետ:

Ես շեմ ցանկանում որ դու մօտիկից տեսնես
այն ինչ որ քո երեակայութեան մէջ իսկ շես
կարող պատկերացնել. իմ ցանկութիւնը այդ
է եղել և առաջ, նախ քան ամուսնութիւնու,
որովհետև ես լաւ ծանօթ էի որա անցեալի
հետ, բայց նա խարեց ինձ, քեզ և ամենքիս:
Դու, քոյլիկ, շատ միամիտն ես կարծելով որ
այդ հողի վրայ կանգնած մարդկանց հետ ա-
պօրինի կապերով միացած կանայք կարող են
բարի լինել և խղճահարել... դրանք տղրուկ-
ներ են որ օգտում են վիշացած աղամարդկանց
անասնական կրքերից և ծծում մինչև նրանց
արեան վերջին կաթիւլը... ես շեմ թոյլ տա որ
դու ստորանաս մինչև ինդրելու աստիճան և
քո այդ արած քայլով միմեայն նրանց ծիծա-
ղը յարուցանես...

ՍՈՒԻՆԵ (վճռական) ես պէտք է գամ:

ՍՈՒԻՐԵՆ Բայց ինչ անելու:

ՆՈՒԻՆԵ Ա՛լս միւնոյնն է, այսպէս թէ
այնպէս ես կամենում եմ ուշքի բերել նրան...

ՍՈՒԻՐԵՆ իսկ եթէ նա արդէն ուշքի գա-
լու շրջանից անց է կացել...

ՆՈՒԻՆԵ Այն ժամանակ անարգել նրան,
թքել և գոռալ նրա երեսին որ նա անամօթ է..
ՍՈՒԻՐԵՆ նունէ.

ՆՈՒԻՆԵ Միւնոյնն է, ինչ որ կրել եմ,
դրանից վատը չի լինելու: ես կամենում եմ
ցոյց տալ, որ մենք ես գիտենք լաւն ու վատը
և ըմբռնում ենք որ նրանց արարքը պատած
է կեղծիքով, ստութիւնով և նրանց կեանըը
անառակ է ու լկտի:

ՍՈՒԻՐԵՆ Ջատ լաւ, քոյրիկ, գնանք, կամ
կը վերադառնաք այստեղ երկուսով և կամ ..
և կամ նա առանձին կը վերադառնայ: (գնում
են, պառազա)

ՏԵՍԻԼ 7

Յովսեփ, յետոյ տ. Սուլբեկեան

ՅՈՎՍԵՓ (մտնում է) Գնացի՞ն... ինչ է
դառնում այստեղ, Տէր Սստուած... պարոնը
երբէք տանը չի լինում... այժմ էլ տիրուհու
եղբայրը և տիրուհին գնացին... բայց ուր...
այ այ այ, չլինի թէ բանը պարզել է... վատ
է, շատ վատ է եթէ այստեղ գնացտծ լինեն..
Էհ ինձ ինչ. ես որ իմ վարձքը ստանում եմ
և այն էլ առատորէն... (մօտենում և սեղանին
եւ վերցնում ամբողջ սիգարի տուփը դատար-
կում և գրանը) Այնպիսի յուզման ըստէնե-
րում ամեն մի խելացի մարդ պարտաւոր է
օգտուել... և բացի այդ չի էլ նկատւի... Էհ
ինչ արած, մենք էլ պէտք է ապրենը թէ ոչ...

Տ. ՍՈՒԻՐԵԿԻ. (մտնում և զգոյշ)

ՅՈՎՍԵՓ (վախեցած) Տիկի՞նը... (ուզում
և գնալ)

Տ. ՍՈՒԻՐԵԿԻ. (նկատելով նրան զարմա-
ցած) Ի՞նչ ես անում այստեղ. .

ՅՈՎՍԵՓ եկայ տեսնելու թէ լամազ չէ
մարել արդեօք...

Տ. ՍՈՒԻՐԵԿԻ. 2է որ կարող ես արթնոց-
նել նրանց...

ՅՈՎԱԿԻՓ ՆՐԱՆԳ... մւմ տիկին:
 Տ. ՄՈՒԼՅԵԳ. Պարսնիդ և տիրուհուդ,
 ՅՈՎԱԿԻՓ (շփորուած) Ա... այս... նե...
 ներեցէք...
 Տ. ՄՈՒԼՅԵԳ. Վագուց է ինչ նրանք քնած
 են...
 ՅՈՎԱԿԻՓ (կամենալով խոյս տալ պա-
 տասխանելոց) Ինձ կարիք չունէք տիկին...
 Տ. ՄՈՒԼՅ. (գարմացած) Ո՞չ...
 ՅՈՎԱԿԻՓ. Ուրեմն կարող եմ գնալ հան-
 գուանալ...
 Տ. ՄՈՒԼՅ. Հանգստանալ կարող ես. բայց
 շգիսմս արդեօք թէ նրանք քնած են...
 ՅՈՎԱԿԻՓ Ես... շգիտեմ .. կարծիմ.. այս...
 Տ. ՄՈՒԼՅ. Գնա՞...
 ՅՈՎԱԿԻՓ (արագ զնում է)
 Տ. ՄՈՒԼՅ. (կանգնում է յուռա դեմքը
 խաղաղ և հանգիստ արտայալտուրիսն է
 և կրում) Ընորհակալ եմ Աստուած, որ չիքա-
 կանացան իմ կասկածները. (մօտենում է ճախ
 դրան) ոքքան հանգիստ և խաղաղ քնած են
 այժմ նրանք... խեղճ աղջիկ որ զուր կասկա-
 ծանքներից տանջուել է մինչև այժմ, և խեղճ
 զաւակս, որ իզուր տեղը կորցրել է իր վստա-
 հութիւնը... բայց բոլորը կուզզուեն... բոլորը...
 այդ նշանակում է փոթորիկից յետոյ արև...
 կորիւներից յետոյ նրանք դարձեալ սիրալիք,
 միմեանց զիրկ նետուած հանգստանում են,
 առանց կասկածելու, որ այս գիշերային ժա-
 մին էլ կայ մի աշք որ հրճում է ուրախու-
 թիւնից... ես շեմ կարող բնել մինչև շտեմնեմ

իմ երջանիկ զոյգը... (կամաց կամաց մօտե-
 նալով բաց է անում դիսոք և դեմքի արտա-
 յալտուրի իւնը հետզնեսն փախառմ է եւ սար-
 սափի արտայուրին և ստանում) այս ի՞նչ է..
 սենեակը մուժ է... երբէք այդպէս չի եղի
 (ջղային եւ դադայով մօտենում է գրասեղա-
 նին վերցնում է յամպ և սեղուում է դեպի
 դուռը, ներս է մտնում և ճշախով դուրս է
 զայիս, յետոյ շշուկով) ոչ ոք, ոչ ոք... ահ...
 (դողողայով դնում է ճրագը տեղը և ընկ-
 նում արուի վրայ շվեյշով կուրծքը) Տէր Աս-
 տուած... միթէ ճշմարիտ է... ինչպէս ճնշում
 է սիրաս... բայց... (յատոյ նշոյլով) գուցէ
 սխալում եմ... գուցէ շրջագայելու են գնա-
 ցել... բայց այս ժամին... (զանգահարում է)
 տէր Աստուած... ուր կարող են գնացած լի-
 նել... եթէ նա... եթէ նա... ոյժ տուր ինձ Աս-
 տուած.. եթէ ճշմարիտ է. . բայց ոչ, ոչ...
 դա անկարելի է... (կրկին զանգահարում է
 աւելի ուժգին)

ՅՈՎԱԿԻՓ (մտնում է շփորուած) տիկին,
 ի՞նչ էք հրամայում:

Տ. ՄՈՒԼՅ. (արագ վեր կենալով) Ո՞րտեղ
 են...

ՅՈՎԱԿԻՓ Տիկին, չեմ հասկանում..,

Տ. ՄՈՒԼՅ. Ո՞րտեղ են նրանք... միայն
 շաշխատես ստել... զուտ ճշմարտութիւնն եմ
 պահանջում... կեանքիդ մէջ միակ ժառայու-
 թիւնը թող լինի քո կողմից...

ՅՈՎԱԿԻՓ (երկիրդով) Տիկին.., զուք այն-
 քան յուզուած էք երկում...

Տ. ՍՈՒԼԲ. (խիստ) Առանց աւելորդ խըզ-
ճահարութիւնների, պատասխանիր հարցիս...
տանը ոչ ոք չկայ... անկարելի է որ չգիտե-
նաս...

ՅՈՎԱԿԻՓ Տիկին չեմ կարմղ...

Տ. ՍՈՒԼԲ. Ի՞նչ... չես կարող... (ուժզին)
կասես ինձ ճշմարտութիւնը թէ ոչ...

ՅՈՎԱԿԻՓ (երկիրդով) Պարոնը...

Տ. ՍՈՒԼԲ. Պարոնը...

ՅՈՎԱԿԻՓ Գնաց...

Տ. ՍՈՒԼԲ. Մենակ...

ՅՈՎԱԿԻՓ (լուսմ է)

Տ. ՍՈՒԼԲ. Մենակ...

ՅՈՎԱԿԻՓ Այս... տիկին...

Տ. ՍՈՒԼԲ. (շնչառապառ) Ցետոյ...

ՅՈՎԱԿԻՓ Տիրուհին մի նամակ գրեց...

Տ. ՍՈՒԼԲ. Ո՞ւմ...

ՅՈՎԱԿԻՓ Եղբօղը...

Տ. ՍՈՒԼԲ. Ա՞հ...

ՅՈՎԱԿԻՓ Ես տարայ նամակը...

Տ. ՍՈՒԼԲ. Առանց ինձ իմաց տալո՞ւ...

ՅՈՎԱԿԻՓ Տիրուհին խիստ պատէր տուեց
շվրդովել ձեր հանգիստը...

Տ. ՍՈՒԼԲ. Տէ՛ր Աստուած... ևնա հկաւ...

ՅՈՎԱԿԻՓ Այս տիրուհի...

Տ. ՍՈՒԼԲ. Ցետոյ...

ՅՈՎԱԿԻՓ Եւ նրանք էլ գնացին...

Տ. ՍՈՒԼԲ. Ո՞ւր...

ՅՈՎԱԿԻՓ. Ես այդ շգիտեմ տիրուհի...

Տ. ՍՈՒԼԲ. Դու ստում ես...

ՅՈՎԱԿԻՓ Տիկին...

Տ. ՍՈՒԼԲ. Ասա... ուր է գտնւում պարո-
նը այս վայրկենիս...

ՅՈՎԱԿԻՓ (վճռական) Տիկին Գառնիկեանի
տանը...

Տ. ՍՈՒԼԲ. (դողդողալով) Ի՞նչ... Տէ՛ր
Աստուած... ուրեմն այդ անառակուհին... ահ...

ՅՈՎԱԿԻՓ Տիկին ի սէր Աստուծոյ...

Տ. ՍՈՒԼԲ. (ջղաձգաբար քարջ տալով
ընկնում է մի աքոռի վերալ) Ուրեմն ճշմա-
րիտ է... բոլողը ճշմարիտ է... և հս... և նա...
կարողացել է ծածկել... ինձանից... ահ... իմ
ուժից վեր է... ես չեմ կարող տանել... այդ-
պիսի մի հարուած:

ՅՈՎԱԿԻՓ Տիկին... ես իսկոյն կըշտապեմ
բժիշկի ետեկից... հանգստացէք...

Տ. ՍՈՒԼԲ. (խեղդուած) Ճ՛ւտ շ՛ւտ...
կանչիր... ես վատ եմ... զգում եմ... բժիշկ
կանչիր... յետոյ...

ՅՈՎԱԿԻՓ (արագ գնում է)

Տ. ՍՈՒԼԲ. (կտրասուած) Ցոյսերիս հետ...
կեանքս էլ քալքայում է...

Վարագոյր

Գործողութիւն III

(Տիկին Գառնիկեանի տանը մի քնյարձակ դաշիճ։ մէջտեղը դուռ որ բրւելից ընդհանուր մօտքն է։ Ըզ I պլան ու Գառնիկեանի ննջարանը, ճախ III պլան մի դուռ որ հարգչակցամ է տան ներքին մասերի նետ, մէջտեղը մի ճաղի սեղան վրան ուստեղին էն խմիչք զետեղուած էն առատ աջ խորքում կողուակ էն 2 արռո, ճախ I պլան մի պատուան, մօտք երկու բազկարոո, մուտքի մօտ երկու տումբա, ջաներ վառած, սեղանի վրայ կարսուած ջան էն պատի տակ բարձր լամպ, նոյնակու վառած, կահաւորումը ջռայլ էն ճաղակով)։

(Վարագոյքը բարձրանալիս, Լեռն Գարայեան նստած է աջ կողմը, մի սիզար բերանը էն մօնկը աջքին, մի բաժակ ջամպայն առաջ ջին դրած, պատզա)։

ՏԵՍԻԼ 1

Լեռն Գարայեան, Բարսեղ,

Լեռն (անբաւական ջարժուամ անելով) Սատանան տանի, չուտ կինստենք սեղանի թէ ոչ։ (Խմանմ է ջամպայնը)

ԲԱՐՍԵՂ (մտնում է, սկսուեղի վերայ կոնեակ էն բաժակն եր դարսած մօտենում է սեղանին)

Լեռն է' լսիր Բարսեղ..

ԲԱՐՍԵՂ (միբաւորուած) ես պարսն Լիոն, Պասիլիի եմ և ոչ թէ Բարսեղ..

Լեռն (ծիծաղելի ծամածոռոքեամբ) Ինչու անպատճաւ Պասիլի և ոչ Բարսեղ..

ԲԱՐՍԵՂ Որովհեան Բարսեղ միմիայն գոեհիկներն են զործածում..

Լեռն իսկ դու աղնուական ես, սահանան տանի..

ԲԱՐՍԵՂ Մեր շրջանը արնեականների շրջան է պարսն Լիոն և մեղանում պատրի մն Պասիլիյ։ (զեռում է)

Լեռն Սա էլ է շրջան ունեցել, այ բան:

ՏԵՍԻԼ 2

Լեռն են իյինեան, լեռոյ Բարսեղ

ԳԵՐԱՍԻՄ ԻԼԻՆԵԱՆ (մտնում է խորքից, նրա դեմքը ժպտուն են ինքնաբաւական արտայալութիւն և կրում)

Լեռն (դիմելով նրան զողոքոր) իմ խոնարհ յարգանքը պալոն իլինեան, իմ ամենախմարչ յարգանքը։

Իլինեան Բարե բարե.. գուք մենակ էք..

Լեռն հնչպէս տեսնում էք։

Իլինեան իսկ ուր է մեր թագուհին։

Լեռն (զլսով աջ I դուռն է ցոյց տալիս) Ջարդաբում է։

Իլին, իսկ Արտէմ Ալէքսանդրովիչը դեռ չէ եկել...

ԼԵՒՈՆ Ո՛չ.
 ԻԼԻՆ. Այդ լաւ է. լսիր Լեռն, արդեօք
 շպիտես թէ որ աստիճան մատչելի է սա.
 ԼԵՒՈՆ (յանդիմանական) Պարոն Իլի-
 նեան...
 ԻԼԻՆ. Ի՞նչ կայ, ևս դեռ ծեր չեմ և
 մանաւանդ ուր... (մասերը զփռում է կամենա-
 լով փող հասկացնել)
 ԼԵՒՈՆ Այս, փողը ամեն պակասութիւն
 ծածկում է:
 ԻԼԻՆ. Պակասութիւն.
 ԼԵՒՈՆ Այսինքն ծերութիւնը այսպիսի
 գէպերում մի մեծ պակասութիւն է:
 ԻԼԻՆ. Իսկ երիտասարդութիւնը առանց
 փողի մի բանի նման չէ...
 ԼԵՒՈՆ (հազոր է)
 ԻԼԻՆ. Ես կամենում եմ ոբսալ մեր թա-
 գուհուն...
 ԼԵՒՈՆ Դժւար հարց է...
 ԻԼԻՆ. Ինչու...
 ԼԵՒՈՆ Որովհետեւ... մի որովհետեւ կայ...
 ԻԼԻՆ. Օ՛ Սուլբէգեանը ամուսնացած է..
 ԼԵՒՈՆ Իսկ դուք ի՞նչ էք...
 ԻԼԻՆ. Այսինքն ուզում եմ ասել, որ նոր
 ամուսնացած է և կարելի է շուտ խլել նրա
 ձեռքից...
 ԼԵՒՈՆ Կասկածում եմ:
 ԻԼԻՆ. Կը փորձեմ...
 ԲԱՐՍԵՂ (մտնում է, բերելով հաւ եւ
 այլն, եւ դարսում է սեղանի վրայ)
 ԻԼԻՆ. Վասիլի.

ԲԱՐՍԵՂ Հըամայիցէք...
 ԻԼԻՆ. Սուլբէգեանը գալու է...
 ԲԱՐՍԵՂ Այս,
 ԻԼԻՆ. Հաստատ գիտես...
 ԵԱՐՍԵՂ Ես եմ տարել տիրուհու նամակը
 և դրական պատասխան ստացել...
 ԻԼԻՆ. Լաւ. (Բարսեղը գնում է): Այդ
 վատ է:
 ԼԵՒՈՆ Այս, այնքան էլ լաւ չէ: (պառզա)
 ԻԼԻՆ. (մի րիմկա կոնեակ է խմում)
 ԼԵՒՈՆ (ձեռները զփելով մօտենում է
 Երան) Պարոն իլինեան...
 ԻԼԻՆ. Ասա.
 ԼԵՒՈՆ Այսօր մի դժբախտութիւն պա-
 տահեց ինձ:
 ԻԼԻՆ. Ի՞նչ դժբախտութիւն...
 ԼԵՒՈՆ Բոլոր փողերս տանուլ տուի:
 ԻԼԻՆ. Է՞՞ ի՞նձ ի՞նչ...
 ԼԵՒՈՆ Ինձ մի քսանեհինդ բուրլի շնոր-
 հեցէք...
 ԻԼԻՆ. Այսինքն, ի՞նչպէս թէ շնորհեցէք...
 ԼԵՒՈՆ Այսպէս պարտք տուէք...
 ԻԼԻՆ. Ա՛ պարտք, այդ ուրիշ բան է
 (տախս է),
 ԼԵՒՈՆ Ճնորհակալութիւն: (հեռանալով
 կողմ) Խո՞զ.
 ԻԼԻՆ. (կողմ) Պորտաքոյծ անպիտան:

ՏԵՍԻԼ 3

Լեռն, Իլինեան, Մալայեան, Անտոնեան.

(Մայակեան եւ Միխայէլ Անտոնեան մտնում են, Մայակեանը քերեր հարբած է. սպան իրան շատ լուրջ է պահում)

ՄԱԼԱՅ. Արդէն քամում են բաժակները (մօտենալով սեղանին) Միխայէլ Կոստանդինովիչ, մօտեցէք... ինչ էք կամենում կոնեակ մէջ լիքօր..

ԱՆՑՈՆ. Քենեղիկտին... ես պաշտում եմ այդ հրաշալի ըմպելիքը:

ՄԱԼԱՅ. Ես ևս...

ԼԵՒՈՆ (նյոնպէս մօտենալով) Ես ինչո՞վ եմ պակաս: Իսկ գուք պարոն իլինեան...

ԻԼԻՆ. Ոչ, դա իմ ճաշակի չէ... զբանում ինչ որ կանացի բան կայ... ես սիրում եմ Գոնեակը, հատու և կտրուկ:

ՄԱԼԱՅ. Ճատ կտրուկ բացատրութիւն:

ԼԵՒՈՆ Միանգամայն գովնոտի արժանի...

ԱՆՑՈՆ. (խմելով) Հրաշալի է, մարդ մի տեսակ հրձւանքով է ծծում բենեղիկտինի աբկօնլո... դա կարծես մարդի մտքերը բարձրացնում է, և լինում է մի վայրկեան, որ մարդ մոռանում է աշխարհը և երեակայութիւնը վառում է:

ԼԵՒՈՆ Պարոն սպան հիանալի վերլուծեց քենետիկտինի գործած աղքեցութիւնը մարդկանց մտքի վրայ... հա ի դէպ Մալայեան, մրտեղ է Արտէմ Ալէքսանդրիշը..

ՄԱԼԱՅ. Կը գայ ոչ վաղ քան ժամի տասը: ԻԼԻՆ. Ինչո՞ւ...

ՄԱԼԱՅ. Ամուսնական շղթան յարգելի պ.

հլինեան, ամուսնական շղթան...

ԼԵՒՈՆ Դժւար է խեղճ Արտէմի գլութիմը: ԻԼԻՆ. (կողմ) Գուցէ յաջողուի:

ԼԵՒՈՆ Սատանան տանի, երբ գուրս կը դայ իր սենեակից: Զանձրալի է այս...

ՄԱԼԱՅ. Ո՞վ, Մանեան:

ԼԵՒՈՆ Այս, ինչ ենք մենք տղամարդիկա առանց կանանց:

ԱՆՑՈՆ. Կանայք աղամարդկանց վշտերի բուժիչ բալասանն են...

ԼԵՒՈՆ Նրանք արեգակ են, որոնցից մենք ստանում ենք կեանք:

ՄԱԼԱՅ. Կանայք մի աղբիւր են, որից մենք ըմպում ենք սէք...

ԻԼԻՆ. Իսկ իմ կարծիքով կանայք սաեղծուած են միմիայն տղամարդկանց տանջելու և մորթելու հայաբ:

ԲՈՂՈՐԾ. (ծիծաղում են)

ՏԵՍԻԼ 4

Նոյնք եւ ու, Գառնիկեան յետոյ Բարսեղ

Տ. ԳԱՌՆԻԿ. (դուրս է զայն իր նեցարանից, զիր եւ ձաշակով հազնաած. նա դեկուտեով է) Ինչո՞ւ տեսնում եմ առանց ինձ էլ գուք ուրախ ժամանակ էք անցկացնում պարոններ:

ՄԱԼԱՅ. Ա՞մ Մանեա, ինչեր էք ասում:

ԱՆՑՈՆ. Մենք, տիկին, ծիծաղում էինք մի արտօննչի համար որ արտայայտեց պ. Իլինեանը խիստ կծու կերպով:

Տ. ԳԱՌՆԻԿ. Եւ ինչ տրառնջ, հետաքրպիլ է:

ՄԱԼԱՅ. Նա պնդում է որ կանայք ստեղծուած են մարդկանց տանջելու և մորթելու համար:

Տ. ԳԱՌՆԻԿ. Ճշմարիտ է այդ պ. Իլինեան, թէ միայն զրպարտութիւն: Իլին. ճշմարիտ է և կը հաստատեմ... Լեին. Տեսնենք...

Տ. ԳԱՌՆԻԿ. Հաստատեցէք. Իլին. Ես տանջւում եմ ձեր սիրով: Լեին. Այս այն նա շափազանց է տանջւում:

Տ. ԳԱՌՆԻԿ. Հա հա հա շնորհ արէք պ. Իլինեան: Դուք բախտաւոր էք որ ձեր այդ խօսքերին ներկայ չէ Արտէմ Սլէքսանդրիշը:

ՄԱԼԱՅ. Ապա թէ ոչ, բարոյական տանջանքը Փիգիքականի կարող էր փոխուել:

Տ. ԳԱՌՆԻԿ. Լոգիկա կայ... հա հա հա... համեցէք պարսներ:

Իլին. (կողմ) Դեռ չեմ յուսահատում:

(Բոլորն նստում են. տ. Գառնիկեան ձախ կողմը, Լեւոն աջ նրա դեմք, Մալայեան մէջքը հասարակութեան դարձրած, դէմք սպանեա պ. Իլինեան. Մալայեանի եւ տ. Գառնիկեանի մէջտեղը մի դատարկ արուու:

ԱՆՑՈՆ. Ի՞նչ կը ցանկանայ խմել տիկինը ՄԱԼԱՅ. Ի՞նչ հարց Միխայէլ Կոնստանդինովին, ի հարկ է շամպայն... Իլին. (հեղճական ծիծաղով) Եւ ոչ թէ

ԱՅՆԵՂԻԿԱՐԻՆ հա հա հա,

ԱՆՑՈՆ. Ո՞չ էլ անշուշտ կոնեակ.

Տ. ԳԱՌՆԻԿ. Կոնեակ Փիշ ինչ ճաշակ, դա հարդեցողներին է միայն հետաքրքրում: Իլին. (հազոր է)

ԼԵԻՆ. Քաջասիրտ եղէք պ. Իլինեան, ես ձեր կողմնակիցն եմ...

ՄԱԼԱՅ. Դաւաճան:

ԼԵԻՆ. Այս, մենք տղամարդիկ ենք...

ԱՆՑՈՆ. Խսկ մենք ինչ ենք:

(Ընդհանուր ծիծաղ):

Իլին. Հետաքրքիր է իմանալ թէ կանաք ինչ են մտածում մեր մասին...

Տ. ԳԱՌՆԻԿ. Այսինքն:

Իլին. Ի՞նչ ենք մենք նրանց համար:

Տ. ԳԱՌՆԻԿ. Տղամարդը անդին գանձ է, երբ մեզ հարկաւոր է, խսկ մի ցնցոտի, երբ մենք նրան կարիք չենք գգում:

ԱՆՑՈՆ. (ծիծաղելով) Ճնորհակալութիւն ձեր անկեղծութեան համար տիրուհի:

ԼԵԻՆ. Օ՛ Մանեայի հայեացքները շատ խիստ են այդ խնդրի վերաբերմամբ:

Իլին. Մի փոքր շափազանց խիստ:

Տ. ԳԱՌՆԻԿ. Ես կարիք չունեմ կեղծելու պ. Իլինեան և մանաւանդ ձեզ հետ:

Իլին. Եւ մանաւանդ ինձ հետ: Ջատ հասկանալի է, լեռն կոնեակ ածաւ:

ԼԵԻՆ. Կոնեակ, պաշտում եմ:

Տ. ԳԱՌՆԻԿ. Լեռն, շամպայն,

ՄԱԼԱՅ. Բենեափիկտին.

Լեի՛ն (բաժակները ածելով) Կեցեն
խմիշները:

ՄԱԼՅՅ. Կեցցէ ալկօհօլը: Ես ալկօհօլի
ամենազօրեղ պաշտպանն եմ, որովհետեւ նրա
ազգեցութեան տակ մարդի առաջ բացւում է
մի այլ աշխարհ մարդին տիրապետում է զւար-
ճանալու և օրդիայի գիրկը նետուելու մի տեխ-
շանք... Մանեա զու պաշտելի ես...

Տ. ԳԱՅԻՆԻԿ. Որովհետեւ քո գլուխը բանւել
է արդին ալկօհօլի գոլորշիով:

ՄԱԼՅՅ. Ո՛չ, որովհետեւ զու պաշտելի
ես. Լոգիկայ կայ:

Լեի՛ն Լաբը Մալայեան, եզր մէկը փողի
կարիք է զգում և ունեորից ուզում է, այդ
դէպքում ինչ է թելագրում ունեորին քո լո-
գիկան...

ՄԱԼՅՅ. Իմ լօգեկան ասում է չունեորին,
թէ մի ուզիք ուրիշներից փող, դա ամօթէ. է.
Իսկ եթէ նա երեսպինդ է և ուզում է...

Լեի՛ն եւ ուզում է...

ՄԱԼՅՅ. Այդ դէպքում պէտք է տալ:

Լեի՛ն Կեցցիս. տուր ինձ 25 ըուբլի...

ՄԱԼՅՅ. Ի՞շու.

Լեի՛ն Որովհետեւ կարիք ունեմ...

(ընդհանուր ծիծաղ)

ՄԱԼՅՅ. (տալով փողը) Մանեա, քո
պաշտելիութիւնը ինձ թանգ նստեց:

Տ. ԳԱՅԻՆԻԿ. Ո՛չ, այլ քո լոգիկան...

Լեի՛ն Ես ինդրել շեմ սիրում, մանաւանդ
որ փողի հարցերում ես շատ մաքուր եմ...

Իլին. Այնքան մաքուր, որ մի անգամ

գրպանդ մտածը էլ չի գուրս գալիս:

Լեի՛ն Որովհետեւ եթէ գրպանդ մտաւ,
կը նշանակէ գարձաւ իմ սեփականութիւնը և
շատ հասկանալի է որ զուրս չգայ:

Տ. ԳԱՅԻՆԻԿ. (ծիծաղում է.)

Լեի՛ն ի՞նչու ես ծիծաղում Մանեա, զա
դուտ ճշմարտութիւն է, ես շունեմ և եթէ ու-
զեցի պէտք է տալ, իսկ եթէ տան, յետ չը-
պէտք է ուզեն, այնպէս չէ Մալայեան.

ՄԱԼՅՅ. Այս այն

Լեի՛ն (իլի նեանին) Խորհուրդ եմ տալիս
նրա օրինակին հետեւել. զա միակ ազնւու-
թիւնը կը լինի ձեր կողմից:

Ըն80ն. Բայց ալ, Մալայեանի համաձայ-
նութիւնը մեծ վնաս կարող է հասցնել նրան:

ՄԱԼՅՅ. Գրպանիս և ոչ թէ ինձ...

Լեի՛ն Այս գրպանին. Մալայեան, զու
երջանիկ ես:

ՄԱԼՅՅ. Ե՞ս.

Լեի՛ն ի հարկէ դու, քո գրպանը պա-
հում է քեզ շատ փորձանըներից, և եթէ գըր-
պանդ չլինէր, քո այստեղ գտնուելուն համար,
իինդ աշքերդ կը հանէր:

ՄԱԼՅՅ. Լինն, անտակտ ես խօսում. ես
օրինակի ամուսին եմ:

Լեի՛ն Այս աստիճանի, որ շաբաթը վեց
օր գուրսն ես անցկացնում:

Տ. ԳԱՅԻՆԻԿ. Այ, այ այ, Գուրգէն.

ՄԱԼՅՅ. Ա՛յ Մանեա, ես մեղասր չեմ.
Եթէ քո տունը իմ սրան աւելի մօտ է քան
թէ իմ սեփականը..

Տ. ԳԱՐԵՆԻԿ. (Ժաղքական) եւ այդ ասում
է օրինակելի ամուսինը...

ՄԱԼԱՅ. Այդ ասում է խելացի ամուսինը,
իմ կարծիքով խելօք մարդը, ամուսնանալիս
պէտք է մի այնպիսի շղթայ կազմէ, որը ու-
նհնայ մի աղատ ծայր և մի օղակ,

Լեհոն Օղակ, դա հետաքրքիր է:

Տ. ԳԱՐԵՆԻԿ. (Ժպիտով) եւ ինչու ան-
պատճառ մի օղակ. ես կարծում եմ, որ հար-
կաւոր է երկուսը...

ՄԱԼԱՅ. Այ էնց յիմարների սխալը դրա-
սումն է. խելացին օղակը կը գցէ կնոջ վիզը,
իսկ աղատ ծայրը ինքը կը բռնէ և երբ որ
կամենայ այն ժամանակ կը թողնէ ձեռից, իսկ
կինը կը մնաց շղթայուած...

Տ. ԳԱՐԵՆԻԿ. Իսկ ինչից է պատրաստուած
լինում այդ օղակը:

ՄԱԼԱՅ. Նայած դասակարգելին... չքա-
ռորը փայտեայ օղակ է անցկացնում, միջին
դասակարգը երկաթեայ, բուրժուան պղնձեայ,
իսկ մենք արխտոկատներս ոսկեայ... (ոգեսո-
րուած) և ես մի այնպիսի թանձր ոսկեայ օ-
ղակ եմ անցկացը իմ կնոջ վիզը, որի ծան-
րութեան տակ դժուար թէ նա կարողանայ մի
քայլ անել ինձ արգելելու համար:

Լեհոն Կեցցէ Մալայեանի փիլիսոփայա-
կան վարդապետութիւնը. ինչպէս էք գտնում
դուք այդ, պ. իլինեան:

Իլին Ռ'չ, ես չափազանց յիմար կը լի-
նիմ, եթէ մի այդպիսի օղակ անցկացնեմ կնոջս
վիզը... բայց այ ես ուրախութեամբ և ծնկա-

չոք պ. Մալայեանի օղակի 2 կշիռը ունեցող
մինը կառաջարկէի մեր յարգելի հիւլնկալու-
հու քնոյշ և սպիտակ պարանոցի համար:

ՄԱԼԱՅ. Իսկ Սուլբէգեանը մի այնպիսի
աղպատեայ բարակ օղակով կոլորէր ձեր պա-
րանոցը, որի սեղմումից դժուար թէ աղա-
տուէիր...

Իլին. (գրգոռուած) Այդ ասենք, ներողու-
թին. եթէ նա ոյժ ունի թող իր կնոջ պա-
րանոցը ոլորէ:

Տ. ԳԱՐԵՆԻԿ. (Կես լրջացած) Իզուր էք
յուզուում պ. իլինեան, ես այդ օղակներից խ-
րաքանչիւրը կրել եմ վիզու և իմացած եղէր որ
զրանցից ոչ մինը ինձ գրաւելու ոյժ չունի:

Իլին. (յառահատ) Արգեօք ձեղ պէս են
մտածում բոլոր աշխարհիկ կանալք:

Տ. ԳԱՐԵՆԻԿ. Ես ես եմ, և ինձ չի հրա-
մուրում ոսկու շքեղ փայլը:

Իլին. (սովորմելի) Լէօն, կոնեակ.

(Ընդհանուր ծիծաղ)

ԲՈՐՍԵՂ. (գրան մեջ) Արտէմ Ալէքսանդ-
րովիչը եկաւ:

Իլին. (արագ խմում և կոնեակը) Ես...
ես զնում եմ պարոններ:

ՄԱԼԱՅ. Հանգիստ նստեցէք. չենք դա-
ւաճանի:

Լեհոն եթէ քսան և հինգ բուրլի կը
տաք: (ծիծաղ)

ՏԵՍԻԼ 5
Նոյնը եւ ըրտեմ.

ԵՐՑԵՄ (մտնում է քիչ շփոթաւած տրամադրութեամ մեջ) Ներիր թանգագին Մանեան (ամբուրամ է ձեռքը) բարկ բարեկամներս... դուք գուարձանում եք արդէն... երջանիկները...

Տ. ԳԱՌՆԻԿ. Նստիր... (Ծրտեմը նստում է Մալայեանի եւ տ. Գառնիկեանի մշջտենք գոնուող արոտի վրա) Բնշնչ այսքան ուշացար...

ԱՐՑԵՄ Աշխ անտանելի է գառել նա.

ՄԱԼԱՅ. Խեզ զն տղայ...

ԱՐՑԵՄ Յիմար.

ՄԱԼԱՅ. Լօգիկա չկայ. յիմար լինէի տանը նստած կը մնայի:

ԱՐՑԵՄ Երկակայիցէք, նա սկսել է սպառնալիքներով խօսել ինձ հետ..

ԱՆՑՈՒ. Սպառնալիք, ևս այդ երբէք չի տանիլ:

ԱՐՑԵՄ Այս, բայց ես ի հարկէ այնքոնց ած չեմ կանգնած, որ մի ինո՞ջ սպառնալիքներից վախճանում..

Տ. ԳԱՌՆԻԿ. Խեղչ բարեկամս.., Գուրզէն շոմզային ածան.

ԼԵԼԻՆ (բաղորող շարժումով վեր կենաւու) Դա իմ պաշտօնս է, գրողը տանի:

ԻԼԻՆ. Որի համար ստանում ես քսանհինգանցներ:

ԼԵԼԻՆ Այս, ապրել է հարկաւոր:

(ԻԼԻՆ. Աւրիշի հաշուտով...) .

ԼԵԼԻՆ Դա էլ մի արհեստ է (ածում է) խմիր Արտէմ Ալեքսանդրովիշ խմիր. շամպայնը առաջին բժիշկն է ընտանեկան կոփիների դէմ:

ԱՐՑԵՄ Այս պէտք է խմել. պէտք է մինչև անգամ հարրել. Աստուած վկայ ծիծաղելի է մտածելին անգամ, բայց քիչ է մնում որ պարկէչտ ամուսին գաղանամ:

ՄԱԼԱՅ. Այդ դէմքում, սիրելի բարեկամը, մնիք բեկ կախ կը տանք:

Տ. ԳԱՌՆԻԿ. Ոչ, աւելի շուտ ես նրան կը խեղդեմ...

ԱՐՑԵՄ Քո բազուկների մէջ իմ անգին Մանեան,

ԻԼԻՆ. (բրտինքն է սրբում)

ԼԵԼԻՆ Դուք շոգում եք, ու. իլինեան. կոնհակ խմեցէք, զա ձեզ կը զովացնէ...

ԻԼԻՆ Ածան.

ԱՆՑՈՒ. Սուրս վկայ. որ զուարձալի է:

ԼԵԼԻՆ Աւելի զուարձալին այն է ու. սպայ որ յարգելի իլինեանը խմում է երբ ուրախ է, երբ տխուր է, երբ բարկացած է, երբ զւարձանում է և երբ լալիս է. սատանան տանի, ամեն զզացմոնք զբառող և ամեն վիշտ մոռացնող կոնհակը նրա Աստուածն է:

ԻԼԻՆ. (որ արդեն սկսել է հարքի) Խոկ այժմ ես խմում եմ յուսահատութիւնիցս դըրդուած:

ԼԵԼԻՆ Աստուծով միսիթարուես:

ԱՐՑԵՄ Խոկ ինչ է ձեր յուսահատութեան պատճառը:

ԲՈՂՈՐԾ (լոռարիւն են պահպանում)
ԱՐՑԵՄ (չորս կողմք նայելով) ՌՀՇՀՇ,
ինչ խորհրդաւոր դէմքեր:

ՄԱԼԱՅ. Խորհրդաւոր ոչինչ չկայ, մենք
չենք խօսում, որովհետև չփառենք թէ ինչն է
ալ, իլինեանին յուսահատեցնողը:

ԻԼԻՆ. Ինձ յուսահատեցնողը...

ԼԵՒՈՆ (ընդհատելով) Դրսղը տանի յու-
սահատութիւնը, իմ կարծիքով, պլ, իլինեան,
դուք լաւ կանէք եթէ փորձէք բոլոր խմիչք-
ները մէկը միւսի ետեից, և եթէ ոչ մինը շօգ-
նեց, այդ դէքըում մնում է մի ելք...

ԶԱՅՆԵՐ Տեսնենք այդ ելքը...

(Թիծաղ)

ԱՐՑԵՄ Մանեա, իմ Մանեա, ինձ համար
ամեն մի ցաւի բժիշկը դու ես, քո շրթունք-
ները, քո հայեացքը, քո մարմնի գաղջ տա-
քութիւնը...

ՄԱԼԱՅ. Արտէմ Ալէքսանդրովիչը երիտա-
սարդացել է այս երեկոյ:

ԼԵՒՈՆ նա խօսում է ինչպէս մի պա-
տանի:

8. ԳԱՅՆԻԿ. (առանձին գործվի տոնով)
Ո՞չ, նա երեխայ է դառել, նա իմ երեխան է,
և իմն էլ լինելու է բանի կենդանի եմ...

ԱՐՑԵՄ Քանի երկուքս էլ կենդանի ենք,
մեզ բաժանող չի լինի... խոնարհում է զլու-
խը նրա կրծքին)

ԻԼԻՆ. (վեր է կենում զփոքուած)

ԼԵՒՈՆ Ո՞ւր պլ. իլինեան.

ԻԼԻՆ. Ես կամենում եմ մի սիդար ծխել...

ԼԵՒՈՆ (նոյնպէս վեր կենալով նետեսում
է նրան) Սիդար, չնորմեցէր մի քանի հատ:
(իլինեանը տալիս է)

ՄԱԼԱՅ. (վեր է կենում եւ նստում իլի-
նեանի տեղը, ցած խօսում է Անտոնեանի
հետ)

ԱՐՑԵՄ (սիրաբանում է Մանեայի հետ)

ԻԼԻՆ. (աջ նախաբեմում ւեսոնին) Լսիր
Լկոն դու շատ լաւ տղայ ես:

ԼԵՒՈՆ Այդ. (քեխերն է սլորում) Ասենք
այդ վաղուց գիտէի:

ԻԼԻՆ. Ինձ մի խորհուրդ տուր. նրան
փողը չի գրաւում:

ԼԵՒՈՆ Խոկ ուրաց ձեր վատահութիւ-
նը. փողը այստեղ աւելուրդ է, յարգելի պլ.
իլինեան: Մանեան այն աեսակ կանանցից չէ:
իլին ի՞նչ անեմ ուրեմն.

ԼԵՒՈՆ Հրաժարուեցէք:

ԻԼԻՆ. Այդ է քո խորհուրդը.

ԼԵՒՈՆ Այդ է

ԻԼԻՆ. Դա շատ քիշ է:

ԼԵՒՈՆ Ուրիշ ոչինչ չի մնում ձեզ անե-
լու...

ԻԼԻՆ. (գրգռուած էն կիսամարբած) Իմ
ոտքը այլիս այս տանը չի լինի...

ԼԵՒՈՆ Այդ ամենալաւ ելքն է: (հեռա-
նում է եւ նստում իր տեղը պառզա)

ԼԵՒՈՆ Այս ի՞նչ մեռելային խրախճան է.
Մանեա, ի սէր Աստուծոյ բաւական է սիրա-
բանելը. դուք դրա համար ժամանակ շատ կը
գտնէք:

Իլին. (մօսենում է) Լեռն, խմբնք:
Լեռն Այդ ես հասկանում եմ:

Անջոն. Ես ես աւելի:

ՄԱԼԱՅ. Կեանքը դաւն է, ասում են փիլիսոփաները և որովհետեւ գառնութիւնը որքան կարճ լինի, այնքան լաւ կը լինի, ուստի հարկաւոր է կարճացնել կեանքը... ալկօհօլով:

Անջոն. Բուաւ Մալայեան...

Լեռն եւ իր վարդապետութիւնը...

ԱՐՏԵՄ ՈՐԾ օգտաւէտ է դէպի խմիչքը հակումն ունեցաղների համար. իսկ մենք որ ալկօհօլիկներ չենք, աշխատենք այդ կարճ կեանքը անցկացնել ուրախ և տնհոգ. Ահա իմ խորհուրդը պարզներ, վերցնել կեանքից այն՝ ինչ նա տալիս է: Մանեան, իմ անհոգութիւնը և ուրախութիւնը քո մէջն եմ գտնում, և եթէ քեզ կորցնեմ, կեանքը ինձ թւում է թէ անտանելի կը գառնայ, իմ ինչ փոյթը թէ հասարակաց կարծիք կայ, որը կը գատափետէ մեղ, թէ կան օքէնքներ, որոնք կամենում են բոնարարել մեր զգացմոնքը, ստիլելով մեզ քարշ տալ մեր զոյութիւնը չսիրած մի անձնաւորութեան հետ. ես ստում եմ այդ օրէնքը, ես արհամարհում եմ հասարակաց կարծիքը և անձնատուր եմ լինում իմ զգացմոնքներին ու սիրուն: Օ՛, Մանեան, անզնահատելի Մանեան, ես քոնի եմ մինչև վերջին շունչ:

Լեռն Ռւուահ, մի բաժակ կոնեակ, պ. իլինեան:

Իլին. (հարբած) Կոնեակ, զբողը տանի, կոնեակ.

ՄԱԼԱՅ. Ես, պարոններ, թէկ սկզբունքով միշտ հակառակ եմ եղել այդ օրէնքներին, այնուամենացնիւ պարկեշտ և օրինակելի տմուղին եմ:

Անջոն. Իմ կարծիքով օրինական ամուսնութիւնը ստեղծուած է միմիայն գուեհիկ և շրատոր մարդկանց համար. իսկ մնաք որ հասկանում ենք կեանքը, պէտք է օգտուենք նրա ամեն վայելիքներից...

Իլին, Պէտք է օգտուենք նրա ամեն վայելիքներից, այ լաւ խօսք:

Տ. ԳԱՄՆ. Իսկ իմ հայեացը բոլորովին այլ է պարոններ (լաօսում և զգացուած են տիտուր) երբ ես ամուսնացայ, ես շատ մատակահաս էի և չգլուխի կեանքի շարն ու բարին, ապագան թւում էր ինձ փայլուն, հրաշտի, անամագ: Ես նետուեցի իմ ամուսնոյ զիրով լի վտահութեամբ, յուսալով որ նրանում կը գտնեմ իմ երազների լիսուի գործադրութիւնը. այդ հաւատը վասեց իմ մէջ մի սէր, մի պաշտում գէպի այն մարզը, որը լուն էր ինձ իմ ծնողների զրկից և նետել ինձ անյայտ մի աշխարհ. սակայն դիւրահաւանութիւնը մեր կանացս թոյլ կողմն է, մենք կամենում ենք հաւատալ մեղ շոալլած խօսքերին և խօստումներին և ողամարդկանց կեղծ և պատիր առաջադրութիւնները ընդունում ենք իրեւ զուտ ճշմարտութիւններ: Իմ յոյսերը շիրականացան, ամուսինս կեանքը տեսած և վայելած մի մարդ ինձանով լիսալուց յետոյ նետուեց շայտութեան զիրկը, առանց մտածելու նոյն իսկ

թագցնել ինձանից իր ստոր դաւաճանութիւնը.
իմ կանացի ինքնասիրութիւնը չկարողացաւ
տանել այդ խարէութիւնը և ես կամեցայ վրէժ
լուծել նրանից, կռուելով նոյն զէնքով։ Ես
նետուեցի ասաջին պատահողի գիրկը, յետոյ
երկրորդին, երրորդին և դարձայ մի անբարո-
յական կին և դա առանց խորհելու, առանց
ուշադրութիւն դարձնելու զրա վատ հետևանք-
ներին։ Ես յանձնուեցի ամենքին, առանց սի-
րոյ, առանց զգացմոնքի, մինչև որ իմ այդ
անբարոյականութեան մէջ սիրտս ընտրեց մէ-
կին և դա, ինչպէս յայտնի է ձեզ, իմ թշուա-
ռական ամուսնու մահուանից յետոյ։ Ես սիրե-
ցի նրան, որովհետև նա ամուրի էր, աղատ և
երդուել էր երբէք շամուսնալ։ Իմ կրած
տանջանքը բաւական էր արգելելու ինձ մտնել
երկու ամուսնացածների մէջ և գժբախտացնել
իմ սեռին պատկանող մի կնոջ, որը կարօղ էր
հետեւ իմ օքինակին՝ այն է անբարոյականանալ։
Ահա իմ խօսքը, պարոններ, չքաւոր կանանց
անբարոյականացնողը մեծ մասամբ եղել է ոս-
կու փայլը, իսկ ունեորներին, տղամարդկանց
վատութիւնը և ստորութիւնը։ Մի ամուսնա-
նար եթէ չէք կարօղ տանել այդ լուծը. դա
շատ ծանր է և մարդ չափազանց բարձր բա-
րուականութեան տէր է լինելու մինչև վերջը
տանել կարողանալու համար, բայց եթէ ա-
մուսնացար, զսպեցէք ձեզ, սանձեցէք ձեր կըր-
քերը և պատճառ մի դառնաք ուրիշի դժբաղ-
դութեանը։

ԱրծէՄ (ապղած) Մանեա, խելագարուել
ես ինչ է։

Լեի՛ն Մանեան հարբել է.

ՄԱԼԱՅ. Նրանում ալկօնօլն է խօսում։

Տ. ԳԱՐԵՆԻԿ. (ոգեւորուքեամբ) Դուք կը
մտածէք անշուշտ թէ ինչու իմ վարմունքը չէ
համապատասխանում խօսքերիս, թէ ինչու եմ
սիրում մէկին որ արդէն ամուսնացած է. բայց
նա իմն էր արդէն, ես նրան սիրել էի ամու-
րի, և երբէք չէր ամուսնանալ նա, եթէ դա
իր մօր երազը իրականացնելու համար շի-
նէր, բայց և այնպէս պարոններ իմ առաջին
մտածութիւնը եղաւ հեռանալ նրանից, մոռա-
նալ նրան... հեշտ է ասելը. կանացի սիրու
շատ թոյլ է և ես այդ դէպրում վարուեցի լոկ
իրբե եսասէր... ես չկամեցայ կամ ճիշտն ա-
սած քաջութիւն չունեցայ զոհել իմ երջանկու-
թիւնը, իմ կեանքը և զիջել մէկին, որը կապ-
ւում էր իմ սիրած էակի հետ օրինաւորապէս։
Ես ատում եմ այդ օքինակները, որոնք մեր
սեռին մեծամասնութեան դժբախտութեան
պատճառն են դառնում, բայց միենոյն ժամա-
նակ ես խորհուրդ եմ տալիս ամուսնացած
պարոններին, որոշ չափով տանելի անել կեան-
քը իրանց կանանց, այդ դժբախտ արարած-
ներին, որոնք թոյլ են և անպաշտպան։

ԱՆՑՈՒ. Ես հիացած եմ, տիրուհի, բոլո-
րովին հիացած։

Տ. ԳԱՐԵՆ. Իմ կրած տանջանքը բաւա-
կան է զրգելու ինձ, որ ես մտածեմ իմ սեռի
մասին։

ՄԱԼԱՅ. Այդ կողմից իմ խեղճը հանգարտ է, որովհետև իմ կինը լիովին եղջանիկ է զգում իրան:

ԼԵԽԹՆ Այն, գիտենք այդ պատմութիւնը, ուկեայ օղակը,

ԻՀԻՆ. Իսկ իմ կինը սառն է և անդգայ ինչպէս ձուկը ուլենն իմ խիղճն էլ կարող է լւել, իսկ եթէ չլուէ, ես գիտեմ նրան լսեց նելու կերպը, Անոն, կոնեակ եմ ուղում:

ԱՆՏՈՆ. Իսկ իմ կինը, պարոններ, քաւ թուր մէկն է, որի հետ ամուսնացել եմ, միմիայն օժիտի համար, և որը այժմ տանը փառաւորապէս խռմիում է:

ԱՐՏԵՄ Խմենը և զուարձանանք քանի դեռ ապրում ենք, այս է կեանքի պահանջը:

ԱՆՏՈՆ. Կեցցէ զեղասութիւնը, որի երկրպագուն եմ յալիտեանս:

ԻԼԻՆ. (հարբած արդէն) Կեցցէ կոնեակը, արին պաշտում եմ:

ՄԱԼԱՅ. և ԼԵԽԹՆ Կեցցեն կահայքը, ԲՈՂՈՔ Ռուռ:

ՑԵՍԻԼ 6

Նոյնք Բարսեղ յետոյ Սաւրեն են նուցե:

ԲԱՐՍԵՂ (արագ մտնելով) Տիրուհի, ես շփոթուած եմ..

8. ԳԱԾՆԻԿ. Ի՞նչ է պատահել...

ԲԱՐՍԵՂ Մի... մի պարոն.

ԱՐՏԵՄ (արագ) Ի՞նչ պարոն,

ԼԵԽԹՆ Ո՞վ է

ՄԱԼԱՅ. Ի՞նչ է կամենում

ԲԱՐՍԵՂ Նա ցանկութիւն յայտնեց ներս գալու:

8. ԳԱԾՆԻԿ. (շփորուած) Անունը...

ԲԱՐՍԵՂ 2կամեցաւ յայտնել: Նա խիստ կրկոյթով հրամայեց սր իմացնեմ ձեղ և ես իմացրի:

ՄԱԼԱՅ. Խիստ երևյթով... դա լաւ բան չի գուշակում:

8. ԳԱԾՆԻԿ. Եւ յատկապէս ինձ կամեցաւ աեսնել:

ԲԱՐՍԵՂ Ես այնքան շփոթուեցի, որ ուշինչ շկարողացայ հարցնել, պարոնի մինակ չէ:

ԱՐՏԵՄ (շփորուած վեր և կենում) Մենակ շէ:

ԲԱՐՍԵՂ Պարոնին ընկերում է մի կին: ԲՈՂՈՔ (վեր կենալով) Կին... հետաքրքիր է:

ԱՐՏԵՄ (արագ, երկիրդով) Զընդունել նրանց:

ՍՈՒԻՐԵՆ (Երեւում և դռան մէջ, հնգնական) Ինչպէս երկում է, այս տանը ազատ մուտք ունենալու համար մի պարօլա կայ. Իսկ ես որ չզիտեմ այդ պարօլան, լանարհաբար ներումն եմ խնդրում իմ այսպէս յանկարծապէի մուտքի համար:

8. ԳԱԾՆԻԿ. (մօտենալով) Ինչով կարող եմ ծառայել պարոնին:

ՍՈՒԻՐԵՆ Ինչով. և այդ հարցնում է ա. Մարիս Գառնիկիսմնը...

8. ԳԱԾՆԻԿ. Ես եմ տիկին Գառնիկեանը: ՄԱԼԱՅ. և ԱՐՏԵՄ (անցնում են ձախ)

իլին. և Անծոն. (անց են կենում աջ) Աշեխն (յամառաբար նստած և մնում) ՍՈՒՐԵՆ (խիստ կոպիտ ձայնով) Թէկ մի մհծ պատիւ չէ ձեզ նման մի կնոջ հետ ծահօթանալը..

Տ. ԳԱՌՈՒԻԿ. (վիրաւորուած) Ինձ նման մի կնոջ հետ...

ՍՈՒՐԵՆ Դուք վիրաւորւում էք, շատ լաւ դա նշանակում է, որ դուք սիրու ունէք:

Տ. ԳԱՌՈՒԻԿ. Հարցը իմ սիրու ունենաւումը չէ պարոն. Անցնենք բուն խնդրին: Լեինն Այն այն խնդրին անցնենք պարոն. Անծոն (կոռմ) Ո՞վ է այս լիրը: ՍՈՒՐԵՆ ես շփոթուած եմ տիկին, չգիտեմ արդեօք կարելի՞ է ձեզ տիկին անուանել թէ ոչ.

Տ. ԳԱՌՈՒԻԿ. (գրգոռուած) Պարոն,

ՍՈՒՐԵՆ Դուք ի հարկ է կը հասկանաք որ չափազանց ծանր պէտքէ լինեն այն պատճառները որոնք դրդել են ինձ յակամայից այստեղ գալ: Այս պարոնը (ցոյց և տալիս Երտեմին) իմ քիուայըն է և ես եկել եմ իմ քրոջ կողմից հաշիւ պահանջել երդմազանցից և խարեբայ դաւաճանից:

Տ. ԳԱՌՈ. (շփորուած) Այնքան անսպասելի էր ձեր գալուստը, որ ես չգիտեմ, չեմ կարողանաւ միտքս ամփոփել...

ՍՈՒՐԵՆ (կծու) Բայց ձեզ համար այնքան անսպասելի չպէտք է լինէր իմ քրոջ դժբախտութիւնը և դրանից յառաջացած հետանքները. ձեր շփոթը և կեղծիքը ինձ խա-

քել չեն կարող, դուք դրանց վարժուած կը լինէք չնորհիւ ձեր մի շաբք սիրահարների, որոնց շպրտել էք մէկը միւսի ետեից, կանգ առնելով այս մէկի վրայ. ես շատ լաւ գիտեմ թէ ինչ տեսակ են լինում ձեր տեսակի կանայք և ինչ սկզբունքներով...

Անծոն. (գրգոռուած ձեռքը սրին տանելով) Ես չեմ թոյլ տայ, պարոն, վիրաւորել մի տիկնոց իմ ներկայութեանը...

Իլին. (բռնելով քերից) Հսնդարտ Կոստանդին Միխայիլովիշ:

ՍՈՒՐԵՆ (արհամարհական) Պ. սպայ, ձեր սուրը շատ բութ է, այդ տիկնոջը իմ դէմ պաշտպանելու համար:

ՄԱԼԱՅ. (Վրտեմին՝ որ մի շարժում և անում) Ցիշիր գայլի ատամները:

ՍՈՒՐԵՆ ես մի քանի հարցեր կը տամ, իսկ այնուհետեւ...

Լեինն (յանդուգի) է՛, ինչ այնուհետեւ...

ՍՈՒՐԵՆ Այնուհետեւ կը լինի այն, ինչ որ լինելու է պարոններ... (ա. Գառնիկեանին՝ աշխատելով հանդարտ խօսել) Ի՞նչ փոխարինութիւն էք ուղում դուք այն բանի փոխարէն, որ ես պահանջելու եմ ձեզանից...

Տ. ԳԱՌՈ. Ես ձեզ չեմ հասկանում:

ՍՈՒՐԵՆ Նա ինձ չի հասկանում, օգնեցէք նրան, պարոններ, նա որ ծախել է իրան ամեն մի պատհողի, ամեն մի անցորդի, այժմ անմեղ միամտութեան դիմակ հագած, կերծում է անհասկացողութիւն այն բանի համար որ նրա կեանքի միակ նպատկն է եղել.

ինչ գումար էք պահանջում վերադարձնելու
համար իմ քրոջ անդորրութիւնը... .

Տ. ԳԱՌ. (գրադառած) Որի տեղ էք ըն-
դունում ինձ, պարո՞ն... .

ՍՈՒՐԵԿՆ Մի կնոջ՝ որ վաճառում է իրան
այն մարդին, որը տեղի է վճարում:

ԱՐՑԻՄ (Յառաջ գալով) Յնտ առէք ձեր
խօսքերը... .

ՍՈՒՐԵԿՆ Ի՞նչ...

ԱՐՑԻՄ Յնտ առէք ձեր խօսքը, ապա թէ
ոչ ես պատասխանատու շեմ լինի իմ վար-
մանիք համար... .

ՍՈՒՐԵԿՆ Ա՞ն վերջադէս և դուք պ. Սու-
բէքեան, իսկապէս հիանալի էք խաղում ձեր
լկտի սիրահարի գերը, Վերջապէս դուք մեր-
կանում էք ձեր պարկեշտ դիմակից և երևան
էք գալիս ձեր իսկական, զգուելի գոյնովը.
մենք, յուսով եմ, որ շուտով միմիանց շատ
յաւ կը հասկանանք, իսկ մինչ այդ թոյլ տուք
վերջացնել ինձ՝ իմ սակարգութիւնը:

ԼԵՒՈՆ (գնում է տ. Գառնիկեանի մօս
և աշխատում է հանգստացնել նրան)

ԱՆՑՈՆ. Դուք բաւական յանդուզն էք
այդպիսի մի առաջարկ անելու համար և այն
էլ մի ինտելիգենտ շրջանում:

ՍՈՒՐԵԿՆ Իսկապէս, պարո՞ն սպայ:

ԱԼԻՆ. (Երերանով հարբածութիւնից) Մենց,
պատւառը վաճառականներիս մօտ, վիրաւորել
անդիւ կանանց...

ԼԵՒՈՆ Դա շլուած յանդուզութիւն է...

ՄԱԱՅ. Արխտոկրատներիս վիրաւորէ

մի ինչ որ... մի ինչ որ գտառացի...

ՍՈՒՐԵԿՆ (ծիծակելով երկար) Հա հա հա
արխտոկրատներ, պատւառը վաճառականներ,
ազնիւ կանայք: (դռներին բախելով բաց է ա-
նուամ եւ ու մզգին) Այսուեղ արի քոյք, ներս եկ և
տես այն որչը, ուր հաւաքրում են արխտոկրատ-
ները, պատւառը վաճառականները և ինտել-
լիգէնտները: (Նուեն դռներում երեւում է
գունատ, Ըրտեմ շփորում է, միասները սա-
ռած զարմանքով դիտում են) Տես նայիր
շուրջդ, դիտիր շքեղ սեղանը. այսուեղ կայ
շամպայն, կրնիակ, լիքոոս, կայ արբեցու-
թիւն, շայտութիւն և զեղխութիւն և դոցա
հետ միասին մի կիս, գեղեցիկ և վայելուչ,
որի մերկ կուրծքը և թիկունքը դրդում են այս
պարոններին, այս պատւառը վաճառականնե-
րին և արխտոկրատներին ոտնակոխ անել ա-
մեն սրբութիւն, ամուսին, ընտանիք, երևսայ,
մեռնել խիզճ և ամօթ, խարել անմեղ կա-
նանց, ձգել իրանց ճանկը և քայլայել ընտա-
նիքների բարոյականը. այսուեղ են հաւաքրում
այդ հասարակական ցեցեղը այդ որոմ սերմա-
նողները, անասնական շւայտ ցոպութեամբ
փշացած երևում են մարդկանց մէջ իբրև բար-
ձը շրջանի մարդիկ, ինտելիգէնտներ, որից
ամբոխը օգուտ է քաղելու. և այս է այն
բարձրութիւնը դէպի ուր ձգտում են մարդ-
կութեան մեծամասութիւնը, ահա հասարակ
մահկանացուների անմատելի շրջանի ներկա-
յացուցիչները... ահա անբարոյական կանանց
տիպարը որպիսին հարկաւոր է սրանց... Օ՛

քոյլը քոյլը, մենք չափազանց ցած էինք
կանգնած այդ շրջանից, մենք ձգտեցինք նրան
հասնել և պատժութեցինք... հեռանանք այս-
դեղից յանձնելով նրան միմիայն Աստուծոյ
դատաստանին...

ՆՈՒԻՆ (դառնուրեամբ) Եւ սրանք մար-
դիկ են...

ՍՈՒԻՐԵՆ (արագ ընդհատելով նրան) Սրանք այլասեռուած էակներ են և նրանցում
մարդկային ոչինչ չէ մնացել: Օ՛րոյր իմ
սրանց մերձեցնումը ամեն մի պարկեշտ կնոջ
կորուստ է պատճառում: Լիտիներ և անամօթ-
ներ, որոնց համար գոյութիւն չունի ոչ մի
նւիրականութիւն: Գնանք, հեռանանք այս տե-
ղից, քոյր, մենք ստորացանք այստեղ գալով:
Նորա արժանի չեն մեր խնդիրքին. փախչենք
այս որջից, թողնելով այստեղ միմիայն մեր
դառն արհամարհանքը...

ԱՐՏԵՄ չա հա հա, գաւառացու արհա-
մարհանքը:

ՍՈՒԻՐԵՆ (նայելով նրանց խրոխտ) Ինչ-
պէս տեսնում եմ, դուք այդ արհամարհանքին
էլ արժանի չեք:

ԱՆՑԱՆ. (ապշած) Եւ տիկինը լռում է
առանց մի ձայն իսկ հանելու,

8. ԿԱՌԵՆԻԿ. (անորոշ) Նա լիովին իրա-
ւացի է:

ԲԱՐՍԵՂ (մտնելով) Պ. Սուլբէզեան, ձեր
սպասաւորը:

ՆՈՒԻՆ (ճշում է)

ԱՐՏԵՄ (կորցրած իրան) Կանչըր.

ԲԱՐՍԵՂ (ճշում է)

ՄԱԼԱՅ. Ի՞նչ կարող է պատահած լի-
նել...

ՅՈՎԱՆԻ (մտնելով և շնչառապառ.) Պա-
րմի, շտապեցէք.

ԱՐՏԵՄ Ի՞նչ է պատահել.

ՅՈՎԱՆԻ Ձեր մայրը...

ԱՐՏԵՄ Ի՞նչ... մայրս ..

ՅՈՎԱՆԻ Յանկարծակի հիւանդացաւ և
լինդրում է ձեզ. բժիշկը յայս չունի:

ԱՐՏԵՄ Ա՛լ Աստուծած իմ (արագ գնում
է) (ընդհանուր զփոր)

ՆՈՒԻՆ (ընկնելով Սուրենի ռասին նեկե-
կում է) Նա մեռնում է:

ՆՈՒԻՐԵՆ (շնմքում ձեռքը բարձրացնելով)
Աստուծոյ մատը:

Վարագոյր



Վ Ռ Հ Պ Ա Կ

Երես	Տող	ՄԽԱԼ	ՈՒՂԻՂ
6 նեղքեկից	5	լռում	լռում
9 »	12	Պ.	8.
13 »	14-13	բարէկամ	բարեկամ
17 վերեկից	5	ոտձգութիւններ	ոտձգութիւններ
16 »	12	իիչեր	ինչեր
18 »	9	Սուրէլ	Սուրէնը
22 նեղքեկից	8	Սուցէն	Սուրէն
29 վերեկից	6	սիրում	սիրում
36 նեղքեկից	11	ceremonie	cérémonie
37 »	8	կայ	կայ
40 »	15	անկեղծ	անհղծ
57 »	9	ինչ	ինչի
59 »	1	ամուինս	ամուսինս
60 »	1	ոչ ոք	ոչ ոք
62 »	11	նկատում	նկատում
66 վերեկից	5	որա	նրա
67 նեղքեկից	13	այնպիսի	այսպիսի
80 վերեկից	1	կեցեն	կեցցեն
80 նեղքեկից	10	կեցցիս	կեցցես
80 »	15	լոգեկան	լոգիկան

ՀՀ Ազգային գրադարան



NL0372125

58.827